№ 183 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 — 1907 — ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 № 183

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ **1908** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր. մէկ ամսվանը 1 բուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնական փողոցների անկիւն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

**ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԹԱԻԱԴԵԱՆԸ,**

որի մասին յայտնում է ազգականներին և ծանօթներին հանգուցեալի որդի Մովսէս Մկրտչեան Թաւադեանը։ Յուղարկաւորութիւնը կիրակի, դեկտեմբերի 16-ին, առաւօտեան ժամը 9½-ին, դէպի Զգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը՝ Շուշում։ 1—2

Կիրակի, դեկտեմբերի 16-ին,

**ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ**

—ԹԱՀԼԻՃՈՒՄ—

կայանալու է

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան օգտին

**ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ „ԿԱՊՈՅՏ ՄԻՐԱԺ“**

Մանրամասն ծրագիրը տես 4-րդ երես.
(9,11,14,15,16) առ.

**Սումբատովի բաղանիքի**

բաժնետէրերը յայտնում են ի գիտութիւն, որ 1908 թ. յունվարի 1-ից բաղանիքը տրվում է կապալով. ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Ա. Մանթաշեանցի գրասենեակը՝ առաւօտեան ժամը 10-ից—2-ը։
(և. հ. շ.) առ. 3—5

**ՄԻ ԱՌԻԹ**

Բոլոր անոնք որ կուզեն Կովկասի և Ռուսաստանի այլ մասերէն գնումներ ընել Անգլիական հրապարակէն, ըլլայ դա կերպասի կամ մետաղի վերաբերեալ, ինչպէս և զանազան կալուածի մեքենաներ, կամ տեղս գտնուող այլ և այլ գործարաններու հետ հաղորդակցութեան մէջ մտնել,

**Մ. Բ. ՓԱՓԱԶԵԱՆ**

յանձն կառնէ այդպիսի գործեր։ Պատրաստ է նոյնպէս յանձախորդներ գտնել բոլոր անոնց որ ապրանք մուցնել կուզեն Անգլիական հրապարակի վրայ։

Պայմաններ ու մանրամասնութիւններ կարելի է ստանալ դիմելով.—M. P. PAPAZIAN, 202, Marylebone Road, London W.
Տեղեկութիւններ և կաթալօկներ կը ղրկվին միայն անոնց որ կը ներփակեն ճանապարհածախսը։ (Դրոշմի պարագային 20 կ.)։
(շ.) առ. 5—5

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնավարութիւն. Պատգամաւորութիւնը Փոխարքայի մօտ. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պատգամաւորութեան զեկուցագիրը. Տեղեկութիւններ գաւառից. Թատրոն և՝ երաժշտութիւն. Ներքին լուրեր. Ռուսաստանի կեանքից. Նամակներ խմբագրութեան. Մամուլ. Մի քննադատութեան առիթով. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտասահմանի հայերի կեանքից. Դէպքերը Պարսկաստանում. Դաշնագրութիւնը միջազգային սոցիալիստական կոնգրէսում. Գերմանիան և Բաւարիան. Արտաքին լուրեր. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

### ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Տեղական զեմստվային ինքնավարութիւն մտցնելը Անդրկովկասում կատարելապէս հասունացած խնդիր է։

Անդրկովկասի ազգաբնակութիւնը իր ներկայացուցիչների բերանով, իր բազմաթիւ գաւառական ժողովներում ոչ միայն անհրաժեշտութիւն ճանաչեց տեղական ինքնավարութեան հաստատումը, այլ և մշակեց ինքնավարութեան մի շարք ծրագիրներ, որ ներկայացրեց իշխանութեան։

Կովկասեան Փոխարքան համակրութեամբ է վերաբերվում դէպի այդ խնդիրը։ Պետական Դումայի շրջաններում հնարաւոր են համարում զնել նրան հերթական խնդիրների շարքում։

Եւ գուցէ առաջիկայ 1908 թւի վերջերին նոյնիսկ աջողվի ձեռնարկել զեմստվային հիմնարկութիւնների հաստատման նախապատրաստական գործողութիւններին։

Մենք անցեալում նուիրել ենք բազմաթիւ յօդուածներ տեղական ինքնավարութեան խնդրին և ցոյց ենք տուել, թէ որքան մեծ նշանակութիւն ունի երկրի զարգացման համար վարչական-հասարակական այդ կազմակերպութիւնը, որ հնարաւորութիւն է տալիս ազգաբնակութեանը ինքնուրոյն տնօրինելու իր գործերը իր ներկայացուցիչների ձեռքով։

Զեմստվօի բացակայութեան պատճառով մենք կաշկանդված ենք շատ և շատ գործերում և ստիպված ենք մատնել մեզ անգործութեան։ Եւ այդ այն ժամանակ, երբ տեսնում ենք, ինչպէս քայքայվում է տնտեսապէս մեր երկիրը, ինչպէս ազգաբնակութիւնը տառապում է աննպաստ կենսական պայմաններից և հիւանդութիւններից, ինչպէս ժողովրդական մասսան մնում է թաղված տգիտութեան մէջ և ինչպէս տեղական թարմ ստեղծագործող ոյժերը յուսահատված թողնում են գաւառը և հեռանում դէպի ուրիշ տեղեր։

Ժողովրդական մասսաների կեանքը ծանրացել է և նա մեծ պահանջ է զգում բարեկարգութիւնների և բարեփոխութիւնների։ Եւ մենք տեսնում ենք, որ որքան ուշանում է կեանքի վերանորոգութեան գործը, այնքան աւելի ու աւելի թշուառ կացութիւն է ստեղծվում ժողովրդի համար։

Տեղական ինքնավարութեան միջոցով մենք պէտք է կարող լինենք դէպի գործունէութիւն կոչել այն բոլոր ոյժերը, որոնք պարունակում են իրանց մէջ կարողութիւն լաւագոյն կերպով ըմբռնելու երկրի շահերը, պաշտպանելու այդ շահերը և գործելու ժողովրդական լայն խաւերի օգտին։

Մենք տասնեակ տարիներ սպասում ենք տեղական ինքնավարութեան ներմուծման մեր երկրում։

Ինչպէս մենք անհնարին կը համարէինք մեր քաղաքների տնտեսութիւնը վարել առանց քաղաքային ինքնավարութիւնների, այնպէս էլ անհնարին է մեր երկրի վարչական և հասարակական տնտեսութիւնը վարել առանց զեմստվօի։

Եւ եթէ դեռ շարունակվում է մեզ մօտ հին կարգը, դա մի անտեղեակութիւն է, դա մի անպատեհութիւն է, որից մեր երկիրը կրել է զգալի վնասներ, և բոլորովին կը վտանգվի՝ աւելի ու աւելի դժուարացնելով իր վերակազմութեան գործը։

Անդրկովկասի ազգաբնակութիւնը սպասում է տեղական ինքնավարական հիմնարկութիւնների բացմանը անհամբեր կերպով։

Գոնէ այժմ չը ձգձգվի խնդիրը։

Ա. Քալանթար

### ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ

Երէկ, դեկտեմբերի 14-ին, ներկայացաւ կովկասեան Փոխարքայ կոմս Վ. Օրլոնցով-Դաշկովին ազգաբնակ տեղերի ներկայացուցիչներից կազմված պատգամաւորութիւնը։

Ընդունելութիւնը տեղի ունէր Փոխարքայի պալատում ցերեկվայ ժամի 3½-ին։

Պատգաւորութեան մէջ մասնակցում էին Զանգեզուրի, Ղուշու, Կարեագինի, Ջիվանշիրի, Գանձակի, Ղազախի, Արէշի, Նուխու, Ախալքալաքի, Բօրչալուի, Նոր-Բայազէտի և Ալէքսանդրօպոլի գաւառների ներկայացուցիչներ, այլև Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովի մի քանի անդամներ։ Պատգամաւորութեան մէջ կային նաև մի քանի թուրքեր Ղազախի գաւառից։

Պատգամաւորութիւնը մատուցեց Փոխարքային մի զեկուցագիր, որին կցված էին իւրաքանչիւր գաւառի վերաբերեալ ազիւսակներ հանդերձ ծանօթութիւններով, նաև մի ազիւսակ հացի գների մասին։

Պատգամաւորութեան կողմից զեկուցագիրը կարդաց Ա. Քալանթարը, որը տուեց նաև բերանացի բացատրութիւններ։

Այդ զեկուցագիրը զետեղված է ստորև։

Ա. Սահակեան խօսեց խառն կոմիսիայի անհրաժեշտութեան մասին։

Փոխարքան ասաց հետևեալը.

«Եւ ինքս շատ մտադիր եմ ձեր յարուցած խնդրի վերաբերութեամբ և արդէն կարգադրութիւն եմ արել նահանգներում, որ ինձ հայթայթեն լրացուցիչ տեղեկութիւններ ազգաբնակութեան նիւթական վիճակի մասին։

Պէտք է նկատեմ, որ գարնանը լաւ էին բերքի նշանները, իսկ յետոյ նրանք փոխվեցին դէպի վատը։

Ես յոյս ունեմ, որ ինձ կաջողվի անհրաժեշտ օգնութիւն հասցնել ազգաբնակութեան, և արդէն ձեռնարկել եմ այդ ուղղութեամբ մի քանի միջոցների։

Երկաթուղու տարիֆը փոխելու վերաբերութեամբ՝ նախօրօք խոստանալ ոչինչ չէ կարելի. բայց ես կաշխատեմ անել, ինչ որ հնարաւոր է։

Հասարակական նպաստը անշուշտ ցանկալի է, բայց ադմինիստրացիայի հակողութեան տակ։

Ինչ վերաբերում է Թիֆլիսի նահանգում գոյութիւն ունեցող գիւղատնտեսական կապիտալին, պէտք է աչքի առաջ ունենալ, որ նա «մելիօրատիվ» դրամագլուխ է, և նրա ծախսելը կարելի է միայն կանոնադրութեան սահմաններում։

Ես կը ծանօթանամ ձեր ներկայացրած նիւթերի հետ և ինչ որ կարելի է իրագործել՝ կանեմ։

Ինչ վերաբերում է զանազան հաստատութիւնների և հասարակութեան ներկայացուցիչներից կազմված խորհրդին, ես կը մտածեմ»։

Պատգամաւորութիւնը մնաց Փոխարքայի մօտ մի ժամ։

### ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆրանսիական «Թան» լրագրին դեկտեմբերի 17-ին (Ն. տ.) Կ. Պոլսից հեռագրում են.

Դիարբէքիրից ստացված լուրերը հաղորդում են, որ Իբրահիմ փաշայի և քիւրդերի դէպքը քննելու համար ուղարկված քննիչ յանձնաժողովը հասել է իր տեղը։ Յանձնաժողովին ուղեկցում է 3 բատալիոն կանոնաւոր զօրք։

—

Լիսաբոնից «Тиф. Лис.» լրագրին հեռագրում են, որ տաճարում եկեղեցական արարողութեան ժամանակ, որին ներկայ էր և թագաւորը իր ընտանիքով, կալանաւորվել է մի տերրօրիստ, որը պատրաստվում էր ռումբ նետելու։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ

Պատգամաւորութիւնը, որ պատիւ ունի ներկայանալ Ձեր Պայծառափայլութեան, բաղկացած է Արևելեան և Հարաւային Անդրկովկասի միայն այն շրջանների ներկայացուցիչներից, որտեղ զգացվում է հացի սուր կարիք և որտեղ տնտեսական կեանքի պայմանները դարձել են չափազանց աննպաստ։

Ամենամեծ ՁԱՍՎԱԾ նահանգը Գանձակի նահանգն է և գլխաւորապէս դրա այն մասը, որ գտնվում է լեռնային և լեռնալանջային շրջաններում։

Եւ արդարև՝ այդ նահանգի մի շարք գաւառներ գտնվում են ներկայումս տնտեսական շատ ծանր և ողբալի դրութեան մէջ։ Ղազախի, Գանձակի, Ջիվանշիրի, Ղուշու, Զանգեզուրի գաւառների ցանքսերը միատեսակ ՁԱՍՎԵՑԻՆ գարնանը և յետոյ այլ ևս չը վերակենդանացան։

Նոյն նահանգում մասամբ ՁԱՍՎԵՑԻՆ Արէշի, Կարեագինի և Նուխու գաւառի մի քանի գիւղական շրջանները։

Երևանեան նահանգից պատգամաւորներ եկել են միայն երկու գաւառից, այն է՝ Նոր-Բայազէտի և Ալէքսանդրօպոլի գաւառներից։ Անշուշտ՝ այդ նահանգի միւս կողմերում էլ կան վտանգված տեղեր, բայց նրանք կազմում են բացառութիւն և ապրում են այնպիսի շրջապատում, որ փոքր ի շատէ բաւարար կերպով ապահովված է ապրուստի կողմից։ Նոր-Բայազէտի գաւառում մօտ քառասուն գիւղ մեծ զրկանքներ են կրել տարվայ ձախորդութիւններից, իսկ մի քանիսը կորցրին ապրուստի բոլոր միջոցները։ Ալէքսանդրօպոլի գաւառում ՁԱՍՎԵՑ է գլխաւորապէս Աբարանպօլ կոչված և նրա մօտ գտնվող շրջանը Միսխանի և Աբրագածի շրջակայքում։

Թիֆլիսի նահանգից եկել են պատգամաւորներ Բօրչալուի և Ախալքալաքի գաւառներից։

Կարսի նահանգի կողմից մի պատգամաւոր է եկել։ Այդպիսով պատգամաւորութիւնը կազմված է Արևելեան և Հարաւային Անդրկովկասի ոչ բոլոր գաւառների կողմից, այլ երկրի միայն մի մասից, այն մասից՝ որ կարիքի ճիրաններումն է գտնվում։

Ներկայ պատգամաւորութիւնը, բաղկացած հայ ներկայացուցիչներից, ուշադրութեան է առել իր հարևանների կարիքը այնքանով, որքանով նրանք մասնակցել են տեղեկութիւններ հայթայթելու գործում իրանց տնտեսական դրութեան մասին։

Անշուշտ՝ այդ տեղեկութիւնները մեր հարևանների վերաբերութեամբ կցկտուր բնաւորութիւն ունեն։ Բայց պէտք է նկատել, որ նրանք լիակատար չեն նոյնիսկ հայերի վերաբերութեամբ, որովհետև վիճակագրական ուսումնասիրութիւններ չեն կատարվում մեզանում ոչ վարչութեան և ոչ մի այլ մարմնի կողմից։

—

Եւ ներկայ պատգամաւորութիւնը մեծ աշխատանք է կրել հաւաքելու այն տեղեկութիւնները, որ այս զեկուցման հետ ներկայացվում են Ձեր ուշադրութեանը։

Հացի պակասութիւնը առաջ բերից նրա սաստիկ թանգացումը մեր երկրի զանազան մասերում, և հացի գները բարձրացան վերջին քառորդ դարում չեղած թանշանների։ Օրինակ, ալիւրի գինը Շուշու գաւառում հասնում է 2 ր. 40 կ., իսկ Զանգեզուրի գաւառում բարձրացաւ մինչև 3 ր. և 3 ր. 20 կ. պուդը ներկայումս, ձմեռվայ սկզբին, երբ սուր կարիքի երևոյթները չեն ստացել դեռ այն ծաւալը, որը սպառնում է երկրին գարնան սկզբին, եթէ միայն նախազգուշական միջոցներ չեն ձեռք առնված լինի նախօրօք։

Գիւղացիութեան ներկայ տագնապալի դրութեան պատճառները հետևեալներն են՝ երաշտ, կարկուտ, հեղեղ, ցրտահարութիւն, դաշտային մկներ, տաւարի ցաւ և շատ տեղերի գիւղացիական տնտեսութեան ընդհանուր քայքայումը։

Ներկայ 1907 թ. գարունը սկսվել էր լաւ նշաններով աշնանացանը շատ աջող բուսել էր, գիւղատնտեսութեան թշնամիները դեռ թոյլ էին։

Գիւղացիները, թէ իրանց սեփական և թէ այն միջոցներով, որոնք ստացել են կառավարութիւնից և հասարակութիւնից, մշակեցին իրանց արտերը։ Անշուշտ գիւղացիները աւելի ևս մեծ ծաւալով կը սերմանէին իրանց հողերը, եթէ աւելի սերմացու ունենային՝ քան ունէին, բայց ինչ որ սերմանված էր, կարող կը լինէր բաւական որոշ պաշար տալ մեր գիւղական ազգաբնակութեանը։

Սակայն գիւղացիների յոյսերին չէր վիճակված արդարանալ։

Գարնան այն շաբաթներում, երբ անձրևները անհրաժեշտութիւն են, եղանակը անցաւ շատ չորային և ոչ մի կաթիլ անձրև չը թափվեց ծարաւի արտերի վրա։

Հացահատիկները փչացան, խոտը մարգագետիններում և արօտներում չը բարձրացաւ։ Ամբողջ գիւղական շրջանների յոյսերը խորտակվեցին ամենադառն կերպով։

Յետոյ եկան և անձրևներ, բայց նրանք այլ ևս անկարող էին կենդանութիւն տալ արտերին, որոնք արդէն չորացել էին։

Այդ անձրևները կարող էին օգնել միայն բարձրադիր տեղերի արտերին և իրօք կարողացան օգնել մի որոշ չափով։ Բայց դժբաղդաբար հունձը փչացաւ աշնան ցըրտերից և վաղահաս ձիւնից։

Մի քանի տեղերում անձրևների գալը ընդունեց մի օտարոտի բնաւորութիւն, մի սուր և կատաղի արտայայտութիւն՝ առաջացնելով հեղեղներ, որոնք ՁԱՍ հասցրին մի քանի տասնեակ գիւղերի։ Ուշացած և երկարատև անձրևներից ՁԱՍՎԵՑԻՆ լեռնային շրջանի մի շարք գիւղերի արտերը և հնձված դէզերը, օրինակ՝ Զանգեզուրի գաւառում, ուր մի քանի տեղերում անձրևները տևեցին մի ամսից աւելի։

Կարկուտը այս տարի ընդունեց մեծ չափեր և արտայայտվեց այնպիսի աւերէշ ոյժով, որ մի քանի շրջաններում ամբողջ հացը փչացաւ և գիւղացիութիւնը միանգամից դէմ յանդիման կանգնեց սուր կարիքի առաջ։ Այդպէս էր կարկտահարի ենթարկութիւնը Նոր-Բայազէտի, Ախալքալաքի, Ալէքսանդրօպոլի, Բօրչալուի և ուրիշ գաւառներում, նոյնպէս և Կարսի շրջանում։

Ներկայ զեկուցագրի հետ ներկայացված ազիւսակներում յիշված են այն գիւղերի անունները, որոնք ենթարկվել են վերև յիշված ձախորդութիւնների աւերումներին։

Գիւղատնտեսական ՁԱՍԱԿԱՐ միջոցներից ամենախոշոր ՁԱՍԸ հասցրել են տնտեսութեան դաշտային մկները, որոնք մեծ քանակութեամբ երևան էին եկել Բօրչալուի, Ախալքալաքի, Ղազախի, Գանձակի, Ջիվանշիրի, Զանգեզուրի գաւառների շատ տեղերում, նամանաւանդ Երևանեան նահանգում և Կարսի շրջանում։ Բօրչալուի գաւառում արձանագրված է, որ 1000 դեսեատինից աւելի ցանքսեր փչացել են մկներից։

Բարեբաղդաբար մոլախը, որ երևացել էր գարնանը շատ տեղերում, չը կարողացաւ կատարել իր աւերիչ արշաւանքները, չնորհիւ նրա դէմ մղված յաջող մարտերի։

Բայց խոշոր ՁԱՍ հասաւ գիւղական տնտեսութեանը անասունների ժանտախտից, որը երևան եկաւ Գան Հալի Հանդ

շատ կէտերում և մանաւանդ ընտրեց անասնապահութեանը Զանգեզուրի գաւառում։ Ժամանակը մինչև այսօր էլ դեռ չէ դադարել։

Զանգեզուրի, Նոր-Բայազէտի, Ալէքսանդրոպոլի, Բօրչալուի, Ղազախի, Զիլանշիրի Շուշու և Դարալագեազի գաւառների և Կարսի նահանգի շատ տեղերի բարձրագիր տեղերում ձիւնի տակ թաղվեցին դեռ չը կալսված հացահատիկներ և նոյն իսկ չը հնձված արտեր, հողի և ձիւնի տակ մնացին գեռնախնձորի ցանքերը։

Տափարակում, ուր ցանում են բամբակ և բրինձ, սաստիկ ցրտեց բերքը, խաղողը փչացաւ, բամբակը կորցրեց իր արժէքը և պտղատու ծառերի ճիւղերը կոտրատվեցին։

Աշնանացանը, որ ուրիշ տարիներ լեռնալանջերում և տափարակներում շարունակվում էր մինչև նոյեմբերի 15, ընդհատվեց և շատ արտեր մնացին առանց սերմելու։

Գիւղացին ստիպված եղաւ անային անասուններին փակել տանը և կերակրել նրանց պատրաստի կերակրով։ Իսկ պաշարներ գիւղական տանը առանց այն էլ շատ քիչ էին այս տարի։

Եւ գիւղացին, հարկից ստիպված, վճռեց ուրիշ ապակոստեցնել անասունների թիւը, որոնց մի մասը արդէն ծախված էր։

Շատ տեղ ճանապարհները փակվեցին, և զժուարացաւ հաղորդակցութիւնը ջաղացի, անտառի և քաղաքի հետ։

Հացի գինը յանկարծ բարձրացաւ չեղած աստիճանի։

Կարօտութեան սպառնալիքը, որ ամառվայ վերջերից արդէն նշմարվում էր գիւղացու առաջ, յանկարծ թափվեց նրա գլխին ուժգին կերպով և մի անգամից աղէտալի դարձրեց նրա կեանքը ձմեռվայ համար։

Պաշտօնական հաղորդագրութիւնները դեռ չեն որոշել դժբաղդութիւնների առաջ բերած վնասները անտեսութեան համար։

(Կը շարունակվի)

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

*Գանձակ, 10 դեկտեմբերի*

Շանտաժիստները այժմս էլ սկսել են տարօրինակ միջոցներով անուանարկել և վարկաբեկ անել իրանց անձնական թշնամիներին։ Եւ այդ նպատակին հասնելու համար նրանք դիմել են մի տարօրինակ միջոցի։ Քաղաքային պօստով ուղարկել են մօտ քսան նամակներ զանազան յայտնի մարդկանց հասցէին ուղղած, որով յայտարարում են, որ Գանձակ քաղաքացի X պարոնը կիր որդին լրտեսներ են։ Քաղաքիս փողոցները ժամը 8-ից սկսած անմարդաբնակ են դառնում. մարդիկ երեկոները երկիւղ են կրում անից դուրս գալու։ Քաղաքը պահպանութեան կողմից անտէրութեան է մատնված։ Ոչ մի քաղաքացի չէք հանդիպի հայոց մասում։ Ս

—

*Աւլաբեան գիւղ (Զանգ. գաւ.), 5 դեկ.*

Ահա ամբողջ երկու ամիս է ինչ սարսափելի ժանտախտը անխնայ կոտորում է տնային կենդանիներին։ Սարսափելի հաժաճարակը երկու ամսվայ ընթացքում իր առատ հունձն է անում գիւղի մի ծայրից միւսը՝ ընտրիւ գիւղացիների և գիւղի տանուտէրի անտարբերութեան։

Այս հաժաճարակի լուրը լսելով, վերջապէս գալիս հասնում է հաժաճարակի վայրը բժիշկը ու զայրացած նախատինք է թափում տանուտէրի գլխին, որ նա երկար ժամանակ չէ յայտնել իշխանութեանը ժանտախտի մասին։ Յաջորդ օրը բժիշկը գիւղի բոլոր կենդանիներին հաւաքել տուեց մի ընդարձակ «ծառի տակ» կոչված վայրը և ապա, քննութիւն կատարելուց յետոյ, գտաւ մի քանի վարակված կենդանիներ ու հարկաւոր կարգադրութիւնն անելուց յետոյ հեռացաւ գիւղից։

Ահա թէ «ազուէսի ժորթու տակ ծածկված» տանուտէրի վատ վարժունքից յետոյ ինչպիսի չարիքներ են առաջ գալիս և ընտեսապէս քայքայում խեղճ գիւղացու կացութիւնը։ Ս.

## ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

*Հինգշաբթի, դեկտեմբերի 13-ին, Թիֆլիսի Արտիստական Թատրօնում*

ռուսաց դրամատիկ խումբը ներկայացրեց մի նոր պիէս՝ «Արտուր Բաֆլս—Ջենտլմեն գող», հեղինակութիւն Ե. Դօրնինգի և Ե. Պրեսբրեյի, թարգմ. Ե. Բիլի, 4 գործողութեամբ։

Պիէսը պատկերացնում է անգլիական կեանքի մէջ գոյութիւն ունեցող պրօֆեսիոնալ ջենտլմեն գողերից մէկի բնորոշոլիքը, թէ ինչպէս ջենտլմեն Բաֆլսը ժուռք գործելով անգլիական մի հարուստ հերցոգի տունը՝ մտերմանում է վերջինիս ընտանիքի բոլոր անդամների հետ, վայելում նրանց հաւատն ու սէրը և ի վերջոյ թողնում-գողանում հերցոգի քրոջ ադամանդեայ թանգագին մանեակը։ Ոստիկանութեան խուզարկու-ագենտներից մէկը ամեն ջանք գործ է դնում յանցանքի ապացոյց երևան հանելու և կասկածանքի ենթարկված Բաֆլսին ձերբակալելու, սակայն վերջինս իր ճարպիկ ընդունակութիւններով աշխատում է խուսափել ձերբակալվելուց։ Բաֆլսը ի վերջոյ ընկնում է հերցոգի աղջկանուհի մի օրիորդի բուռն սիրոյ ազդեցութեան տակ և խոստովանում է օրիորդին իր արատաւոր անցեալ կեանքը և միևնոյն ժամանակ մանեակն իր մօտ գտնվելը։ Խուզարկու-ագենտի ներկայութեամբ Բաֆլսը մանեակը վերադարձնում է հերցոգին, և երբ ոստիկանութիւնը կամենում է ձերբակալել նրան, օրիորդի և իր մտերիմ ու ազնիւ ընկերներից մէկի աջակցութեամբ և խորհրդով նա փախուստ է տալիս ու այդպիսով ազատվում ձերբակալութիւնից։

Բաֆլսի աչքի ընկնող դերը կատարում էր Շօրշտէյն, որը ցոյց տուեց մտածված և գեղեցիկ խաղ։

Մնացած դերակատարները իրանց խաղով նպաստեցին անսամբլին։

Թատրօնը կիսով չափ լիքն էր։

X

—

*Մերվ, 8 դեկտեմբերի*

Մերվի կանանց բարեգ. ընկերութիւնը դեկտ. 6-ին, տեղիս հասարակական ժողովարանում, իր ֆօնդի օգտին երեկոյթ տուեց, որը բաղկացած էր դրական և երաժշտական բաժիններից։

Երկսեռ խումբը երգում էր դեկավարութեամբ ուս. պ. Երամեանի։ Իւրաքանչիւր երգից յետոյ մի ոտանաւոր էր արտասանվում, իսկ գործողութիւնը վերջանալուց յետոյ՝ ցոյց էին տրվում կենդանի պատկերներ։

Մեծերից մի քանիսն իրանց ոտանաւորները յուշարարի օգնութեամբ էին ասում, չը նայած որ ժամանակ էր նշանակած անգիր սովորելու։ Մեծերից Աւագեան և Ապրեսեան, իսկ փոքրերից Ա. Բոչարեան և օր. Սարգսեանց իրանց յանձնված ոտանաւորները գեղեցիկ կերպով արտասանեցին և արժանացան հանդիսականներից բուռն ծափահարութեան։

Բեմի վրա աչքի էին ընկնում օրիորդներ, որոնք երգեցողութեան ժամանակ բնաւ չէին բանում բերանները։

Խումբը երգեց «Մեր հայրենիք», «Լուսնեակն անուշ», «Անձրևն եկաւ», «Իմ չինարի», «Արևնակ էթամ», «Ո՜հ, ինչ քաղցր բան» և «Բամբք որոտան» երգերը բաւարար կերպով։

Վերջին գործողութեանը խաղացին Տէր-Դաւթեանի թարգմանած «Փաստաբանի մօտ» մի գործ. վոդեվիլը. մասնակցողները տեղիս սիրողներն էին, և ամենքը իրանց համապատասխան դերեր էին վերցրել։ Խաղն անցաւ աջող և հանդիսականներին զուարճութիւն պատճառեց։ Ներկայացման վերջը տեղի ունեցան եւրոպական և ասիական պարեր։ Կային նոյնպէս բուֆէտ, ալլեգրիյ և թուղթիկ պօստ։ Դահլիճը լի էր հանդիսականներով։

Բայց մի բան, որ նկատելի էր, այդ այն է՝ որ հասարակութիւնն իր ժամանակին տեղը չէր բռնում։

*Մանասէ*

## ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Բաղուից դեկտեմբերի 13-ին հեռագրում են «Тиф. Листокъ» լրագրին հետևեալը. «Այսօր քաղաքի կենտրօնում ոստիկանապետ փոխ-գնդապետ Զերնիշեվի վրա ռումբ նետեցին։ Ցանցաւորը փախաւ։ Վիրաւորված է հեծեալ պահակը և նրա ձին։ Զերնիշեվը անվնաս է»։

✦ Դեկտեմբերի 13-ին, երեկոյեան ժամը 7-ին, գանձակեցի Կարապետ Օդաբաշեանցի նաւթի պահեստը (Նիկոլայեվսկի փողոց), ուր նստած էր ինքը իր հօր հետ, մտել են 2 անյայտ անձեր, որոնցից մէկը զինված է եղել ատրճանակով, միւսը՝ դաշոյնով, և փող են պահանջել։ Օդաբաշեանը մերժել է, որից յետոյ չարագործը ատրճանակից կրակել է Կարապետի հօր՝ Պետրոս Օդաբաշեանի վրա և վզից վիրաւորել է նրան, իսկ միւս չարագործը սկսել է խփել դաշոյնով Կարապետի գլխին։ Կարապետը, չարագործի հետ վիճելիս խլել է նրանից դաշոյնը, կտրելով նրա 2 ձեռքը և գլխից վիրաւորելով։ Չարագործը սկսել է փախչել, իսկ Կարապետը ընկել է նրա ետևից։ Չարագործին և Կարապետին ձերբակալել է գօրօղօվօյը և վերջինից խլել է դաշոյնը։ Վիրաւորվածները ուղարկվել են Միքայէլեան հիւանդանոցը։ Չարագործին բժշկական օգնութիւն հասցնելուն պէս տարել են ոստիկանատուն, ուր նա անկեղծութեամբ խոստովանվել է և տուել իր ընկերների անունները։ Չարագործը եղել է Ղազախի գաւառի բնակիչ, պահեստի զինւոր Գրիգոր Ղարագեօզով։

✦ Թիֆլիսի բօրսային կոմիտեսը կազմել է այն անձերի ցուցակը, որը կը քննվի արբիտրաժի դատարանի անդամներ ընտրելու համար կայանալիք բօրսային ընկերութեան ընդհանուր ժողովում։ Ցիշեալ ցուցակի մէջ մտցված են՝ Ս. Աւետիսեան, Ա. Այվազեան, Բ. Յարութիւնեան, Խ. Բաբայեվ, Ա. Բօղարջեան, Ի. Հուսէյնբէգով, Վ. Եղիազարեան, Ի. Կաճկաճեան, Ս. Կաֆֆան, Ա. Ղօնդախաղեան, Մ. Ղուլիջեան, Ս. Պ. Մանուէլեան, Ռ. Ա. Մարտիրոսեան, Ի. Կ. Մուրթաֆեան, Ն. Ե. Պասրով, Սէյլանով, Ս. Խ. Սուլթանով, Ի. Մ. Խօրաև, Ե. Ս. Ծատուրով և Տ. Ա. Էնֆիանջեան։

✦ Թիֆլիսի արական III գիմնազիայի ծնողական ժողովը իր վերջին նիստում որոշել է կազմակերպել խմբական դասընթացներ առաջին 3 դասարանների թոյլ աշակերտների համար, որպէսի նպատակով մտադիր է հրաւիրել բարձր դասարանների աշակերտներին վճարով և զբաղմունքները վարել դասարանների վերակացու ուսուցիչների հսկողութեամբ և ծնողական ժողովի անդամների նախաձեռնութեամբ։ Հոգաբարձական խորհուրդը այդ որոշումը ընդունել է լիակատար համակրանքով։

✦ Դեկտեմբերի 17-ին, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի մեշչանների ուպրավայում նշանակված է լիազօրների ընդհանուր ժողով մի քանի կարևոր հարցեր քննելու համար։

✦ Թիֆլիս է ժամանել Բրիւսսելից Թիֆլիսի էլեքտրաքարշի անօնիմ ընկերութեան ներկայացուցիչ Կ. Գ. Դարբիէլը առանձին լիազօրութիւնով և յայտնել է քաղաքային վարչութեանը, որ մինչև մայիսի 1-ը ընկերութիւնը Թիֆլիս կը հասցնէ 15 նոր վագոններ և որ մինչև այդ ժամանակամիջոցը տեղական արհեստանոցներում կը պատրաստվին 4 վագոններ։ Այդ հաղորդագրութիւնը քաղաքային վարչութեան մէջ բաւական կասկածանքով են վերաբերվել, որովհետև շատ անգամ են եղել խոստումներ վագոնների թիւը աւելացնելու մասին։ Այս անգամին Դարբիէլը պնդում է, որ խոստումը անպատճառ կը կատարվի մինչև նշանակված ժամանակամիջոցը և որ անօնիմ ընկերութիւնը նշանակել է նոյնիսկ նշանաւոր պրեմիաներ վագոններ շինող գործարաններին, եթէ 15 վագոն չինելու պատուէրը ժամանակից շուտ պատրաստ կը լինի։ Դ. Դարբիէլը նոր լիազօրութիւններ է ստացել բանակցութիւններ վարելու քաղաքի հետ և նոր գծեր անցկացնելու, Օրթաճալի գիծը ֆունիկուլիօրային գծով փոխարինելու և այլն։

✦ Դեկտեմբերի 13-ին, երեկոյեան մօտ 8 ժամին, Թիֆլիսում, Մուշտայիդզկի մեջլանցքում ժաքստան մօտ մի 21 տարեկան երիտասարդ, իջնելով էլեքտրաքարշի վագոնից, ընկել է հակառակ կողմից եկող էլեքտրաքարշի վագոնի տակ և սպանվել է։

✦ Կարսի շրջանի քաղաքային գլխաւորների տեսուչ Կօտրլևսկին Երևանի գիմնազիայի վերատեսուչ է նշանակված։

✦ «Մշակի» № 182-ի Ներքին լուրերի բաժնում եղող առաջին լուրի մէջ սխալ է մտել. տպված է «Գանձակի անդամ Մելիք-Օհանջանեանը», պէտք է լինի «Գանձակի նահանգական դատարանի անդամ Մելիք-Օհանջանեանը»։

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Մոսկվայի հաւալսարանի աշակերտեան ուղղութեան պատկանող պրօֆեսսորների խումբը, քննութեան ենթարկելով ուսումնարանական գործի վիճակը բարձրագոյն դպրոցներում, ցանկութիւն է յայտնել, որպէսզի ժողովի ապագայում Պետերբուրգում հրաւիրվի աշակերտեան պրօֆեսսորների համագումար։ («Гол. М.»)

✦ Կիէվի համալսարանը 156 արձակված ուսանողների վկայագիրները յանձնել է տեղական ոստիկանութեանը։ Արձակված ուսանողները ադմինիստրատիվ կարգով արտաքսվում են Կիէվի սահմաններից։ («Р.»)

✦ Արդարադատութեան մինիստրութիւնը, «Русь» լրագրի տեղով, մշակում է մի նախագիծ, որի հիման վրա քաղաքական տաժանակիրները այլևս չեն ուղարկվի աքսորատեղի։ Այդ նախագիծը առաջարկել էր հանգուցեալ Մաքսիմօվսկին, բանտերի նախկին կառավարիչը։ Ցիշեալ նախագիծը մշակելու շարժառիթը աքսորատեղիներից փախչելու դէպքերի բազմանալն է։

✦ Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետ Հերարդը Կայսրի մօտ ունկնդրութիւն ուսնենալուց յետոյ վերադարձել է Հելսինգֆօրս։ Վերադառնալուց յետոյ երկար խորհրդակցութիւն է ունեցել սենատոր Մեխելինի հետ, որի խօսքերի վրա հիմնվելով տեղական մամուլը արձանագրում է, որ քաղաքական հորիզոնը մի փոքր պարզվել է, գոնէ, Ֆինլանդիայի դէմ սկված ռեպրեսիան ժամանակաւորապէս ընդհատվել է։ Այնուամենայնիւ Ֆինլանդիայի շատ մասերում, ոչ միայն խոշոր քաղաքներում, այլ և աննշան գիւղերում, ներկայումս միտինգներ են տեղի ունենում բողոքելու գեներալ-մայոր Զէյնին ֆինլանդական գեներալ-նահանգապետի օգնական նշանակելու առիթով։ Սօց.-դեմօկրատների կազմակերպած միտինգներում այդ առիթով շեշտում են, որ նրան նշանակելու մեղքն ընկնում է սենատի և սէյմի բուրժուական կուսակցութիւնների վրա, որոնք իրանց վերաբերմունքով հող պատրաստեցին բօբրիկօվեան ժամանակների վերածնութեան համար։ Հելսինգֆօրսում կայացած մլադօֆինների միտինգը Զէյնի նշանակվելու առիթով ընդունեց մի բանաձև, որը առաջարկում է սենատին տեղեկացնել Թագաւորին երկրում արտայայտվող տրամադրութիւնը։ («Т.»)

✦ Դեկտեմբերի 7-ին յամառ լուր է տարածվել, որ Մոսկվայում սենատորական քննութիւն է նշանակվում։ Ի նկատի ունենալով այդ քննութեան չափազանց լայնութիւնը, ինչպէս լսել է «Р. Сл.» լրագիրը, կը նշանակվեն երեք սենատորներ։

✦ Պետական փոխատու դրամարկղի Պետերբուրգի բաժանմունքի մէջ կատարված վատնումները քննելու համար նշանակված յանձնաժողովը օրէ-օր գալիս է այն համոզմունքին, որ վատնված գումարների քանակը աւելի է, քան կարծվում էր մինչև այժմս։ «Русь» լրագրին հաղորդում են, որ միայն դեկտեմբերի 7-ին վերոյիշեալ մասնաժողովի պարզած վատնումի գումարը մօտ 200 հազարի է հասնում։

✦ Բարձր շրջաններում շատ են խօսում ժողովրդական լուսաւորութեան մինիստր Ֆօն-Կաուֆմանի կնոջ հիւանդութեան մասին։ «Сегодня» լրագիրը հաղորդում է, որ հիւանդութեան պատճառը այն սպառնական նամակներն են, որ իբր թէ ստացել են նա և իր ամուսինը ռուս ժողովրդի միութեան անդամներից և հրէական իրաւահաւասարութեան հակառակորդներից։

✦ Բանտային գլխաւոր վարչութիւնը հրամայել է, որպէսզի երկու սեռի պատկանող այն անձանց, որոնք 1904 թ. յունիսի 7-ի օրէնքի հիման վրա՝ պետական յանցանքների համար՝ դատապարտվում են կալանաւորութեան ուղղիչ տներում, բանտերում կամ բերդերում, այսուհետև պահվեն այն բանտերում, ուր նրանք գտնվում էին գործի քննութեան և դատավարութեան ժամանակ։ Այնուամենայնիւ, եթէ բանտարկեալները խնդրամատոյց լինեն իրանց տեղափոխելու ծննդավայրի կամ բնակավայրի բանտերը, այդ ցանկութիւնը յարգվում է։ («Русь»)

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

*Էջմիածին, 17 նոյեմբերի*

Հանգուցեալ վեհափառ կաթողիկոսն անցեալ տարի մայիսին բարեհաճեց յայտարարել, թէ այսուհետև եկեղեցական-վարչական պաշտօններն ստանձնել կարելի է միմիայն ընտրված լինելու դէպքում։

Պէտք էր ենթադրել, թէ նոյն հայրապետը, հետևողական լինելու համար, պիտի փութար հրահանգ տալ նաև Ռուսաստանում հայոց եկեղեցական-վարչական բարձրագոյն ատեանի՝ սինօդի անդամների ընտրութեան ձևի մասին։ Այս թուերին լրացնելու փոխարէն հանգուցեալ վեհափառ կաթողիկոսը տարարաղդաբար մի խոշոր սխալ գործեց և ընդդէմ իր իսկ յայտարարած ընտրական սկզբունքի՝ նոյն տարվայ հոկտեմբերին իր նախկին անսահման իշխանութեամբ սինօդի անդամ առաջարկեց Մխիթար, Մեսրոպ և Եղիշէ վարդապետներին՝ առանց կանխաւ հարցնելու զոնէ Մայր Աթոռի միաբանութեան կարծիքը և այդպիսով գեր ամենաչնչին չափով անգամ յարգելու իր իսկ յայտարարած սկզբունքը. ասում եմ՝ ամենաչնչին չափով անգամ յարգելու ընտրական սկզբունքը, որովհետև քաջ գիտեմ, որ պատահական մարդկանցից կազմված մի միաբանութեան իրաւասութիւնից միանգամայն վեր պիտի համարել Ռուսաստանի հայոց եկեղեցական-վարչական բարձրագոյն ատեանի համար անդամներ ընտրելը։

Ընթերցող հասարակութեան յիշողութեան մէջ, անշուշտ, դեռ ևս շատ թարմ է այն վայնասունը, որ վերոյիշեալ առաջարկութեան առիթով բարձրացրին մի շարք այլ վարդապետներ, յատկապէս ժողովրդը բռնելով այն ժամանակի դիւանապետ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի վրա, թէ սա իբր գաղտագողի էր կատարել այն գործը և թէ իբր մոլորութեան մէջ ձգել ծերունի հայրապետին, որ զառամեալ լինելով անկարող էր գիտակցօրէն վերաբերվել խնդրի լրջութեան և թուղթն ստորագրել էր թերևս առանց ուշադրութիւն դարձնելու նրա բովանդակութեան կամ կարդալու։ Կար նաև մի ըստ երևոյթին իրաւացի տարակուսութեան և դժգոհութեան պատճառ, թէ այդ առաջարկութեան մասին տեղեկութիւն պիտի ունենային նաև հենց նոյն օրերը ծնունդ առած դիւանական խորհրդի անդամները. սակայն այս ևս լոկ անտեղի խօսք էր և կրքեր յուզող ու փոթորիկ յարուցանող վարդապետների իրաւասութիւնից միանգամայն վեր։ Եթէ ամենայն հայոց կաթողիկոսը, յիրաւի, այլևս կարողութիւն չունէր անձամբ անօրինելու իր պաշտօնին վերաբերեալ գործերը և անհրաժեշտ էր խնամակալութիւն ստեղծել, ապա հարկ էր առնուազն լսել Պօլսի և Երուսաղէմի պատրիարքների, Սսի կաթողիկոսի և Էջմիածնի սինօդի կարծիքները և ըստ այնմ էլ կարգի դնել այդ խնդիրը. մինչդեռ մի նշանակովի կամ թէկուզ Էջմիածնի միաբանութիւնից ընտրված դիւանական խորհուրդ ոչ մի իրաւունք չունէր իրան ամենայն հայոց կաթողիկոսի վրա խնամակալ կարծելու և նրա գործերին միջամտելու։ Հանգուցեալ հայրապետի լիակատար իրաւունքն էր ամեն օր, ժամ և րոպէ թէկուզ մի կողմնակի անձի ձեռքով այս կամ այն կարգադրութիւնն անել և գրութիւնն ուղղել, իսկ դիւանապետի և դիւանական խորհրդի անդամների պարաքն էր լռել և միակ իրաւունքը՝ իրանց պաշտօնից հրաժարվել։

Միանգամայն այլ խնդիր էր, եթէ Էջմիածնի ամեն մի միաբան կամ ամբողջ միաբանութիւնը և կամ հայաստանեայց եկեղեցու զաւակներից մէկն ու մէկը յանուն արդարութեան և սկզբունքի քաջութիւն ունենար երևելու և բողոքելու հանգուցեալ վեհափառ հայրապետի անհետևողականութեան դէմ, որ մի կողմից արդէն կարգադրել էր Աստրախանի համար առաջնորդ և Ալէքսանդրօպոլի համար փոխանորդ ընտրելու, իսկ միւս կողմից առանց որևէ ընտրութեան՝ սրանց գլխին իշխան և դատաւոր էր կարգում՝ սինօդի նոր անդամներ առաջարկելով։

Սխալ էր մի տարի առաջ այս առաջարկութեան առիթով փոթորիկ յարուցանող վարդապետների ձեռնարկած գործը, ոչ ընդունելի և անիրաւութիւն։

Ընթերցողը թերևս չէ մոռացել նաև, որ սրանց պարագլուխն էր Կարապետ վարդապետը։ Ուղիղ մի տարի յետոյ՝ դարձեալ չարաբաստիկ հոկտեմբեր ամսին, ասում են՝ 10-ին, հանգուցեալ վեհափառ հայրապետը նորից բարեհաճել է սինօդի անդամներ առաջարկել։ Բայց այս անգամ Կարապետ ծ. վարդապետին, իմա՝ անցեալ տարի խռովութիւն յարուցանողների պարագլուխ Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանին, և Մուշէ վարդապետին, իսկ իբրև երկրորդ թեկնածուներ՝ Արտակ (այդ խռովութեան մասնակից և պօստ գնացող) և Լեոն վարդապետներին։ Ասում են՝ գործը կատարված է շատ աւելի ծածուկ և խորամանկ կերպով, քան այդ կարող էր անել Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանը. ծրարը պօստին է յանձնվել ոչ էջմիածնում։ Դիւանական խորհուրդ չը կար. ոչինչ չեն իմացել ոչ սինօդի անդամները, և ոչ միայն միաբանները. գաղտնիքը յայտնվել է լոկ կաթողիկոսի թաղման օրերը, երբ այլևս միտք չունէր ծածկելը։

Գիտէ՞ը Կարապետ ծ. վարդապետը, որ իրան սինօդի անդամ էին առաջարկում, և ում խորհրդով ու փափագով է արդեօք, որ երկրորդ թեկնածուները յատկապէս նրա սիրելի աշակերտներն են, թէպէտև թէ հին և թէ նոր շարքերում այդ պաշտօնի համար կան շատ աւելի ձեռնհաս անձինք, քան առաջարկվածները։

Ո՞վ կարող է խիղճն ուրանալ և ասել, թէ Կարապետ ծ., Արտակ և Լեոն վարդապետների գաղափարակցութեան և սրտակցութեան մի ամենափոքր մասն անգամ կարելի էր նշմարել Մեսրովբ, Մխիթար, Եղիշէ ծ., Իսահակ, Խորէն և Եղիշէ վարդապետների մէջ։

Անցեալ և այս տարվայ առաջարկութիւնների հաժեմատութիւնը, մեկնութիւնն ու եղրակացութիւնը թողնում եմ բանիմաց ընթերցող հասարակութեան։

Պարզ է, թէ ինչպէս մի խումբ վարդապետներ առաջ են տանում միմիայն իրանց անձնական շահը, բայց և յատկութիւն ունեն ուրիշներին կուսակցական միտումներ վերագրելու և գաղտագողի գործերի հեղինակ յայտարարելու։

Պարզ է և այն, որ ընտրական սկզբունքի յայտարարելուց յետոյ անտեղի է առանց այլևայլութեան և լոկ նախկին կարգով սինօդի անդամ առաջարկելը և անպատուաբեր՝ ամեն մի ստանձնողի համար։

Ներսէս վարդ. Տէր-Միքայէլեան

—

*Թիֆլիս, 14 դեկտեմբերի*

Սրանով պատիւ ունենք յայտարարել այն բոլոր հասատատութիւններին և ընկերութիւններին, որոնք որևէ կերպով ցանկանում են մասնակցել դերասան Ց. Աբելեանի բեմական գործունէութեան 25-ամեայ յօբելեանին, որ լինելու է ամսոյս 17-ին, թող յայտնեն իրանց ցանկութեան մասին մինչև ամսոյս 17-ը՝ առաւօտեան ժամը 12-ը յօբելեանական մասնաժողովի նախագահ Գ. Կաֆեանցին (Дворцовая ул., д. Сараджева, Контора Россійскаго транспорт. и страхов. общества)։

*Յօբելեանական Մասնաժողով*

## ՄԱՄՈՒԼ

*Օտարոտի, միանգամայն զաւեշտական մտքեր է արտայայտում «Անկախ Մամուլ» թերթը։ Մենք ցոյց տուինք անցեալ անգամ, թէ ինչպէս է նա փորձում յեղաշրջել, ապատել փաստերը, իրողութիւնները ու ուրիշների արտայայտած կարծիքները։*

*Բացի դրանից «Անկախ Մամուլը» անկախութեան մի գունաւոր նշան համարում է ամեն բան հերքելը։ Երբ առաջին անգամ իմացվեց, որ Նպաստամատոյց Յանձնաժողովը ձեռնարկել է պատգամաւորութեան կազմակերպման, Փոխարքայից նպաստ խնդրելու սովատանջ գաւառների համար, նա խսկոյն յարձակվեց այդ ձեռնարկութեան դէմ, ասելով որ դրանով գիւղացու վիճակը չէ բարեփոխվի։ Երբ տպվեց Թիւրքական Հայաստանի հայ սովեալներին օգնելու կոչված մասնաժողովի կոչը, «Անկախ Մամուլը» նորից յարձակվեց, ասելով, թէ օգնելով սովատանջ ժողովրդին՝ դուք խափանում էք նրա ազատագրութեան գործը և նոյնիսկ բացականչեց՝ «հեռացէք գծից», որպէս թէ Թիւրքահայ ժողովուրդը արդէն գտել է իր ազատութեան գիծը, իսկ հանգանակիչ մասնաժողովը կամ հայ բարեգործները իրանց օգնութեամբ խափանում են նրա ազատութիւնը։ Այն հանգամանքը, որ Թիւրքայ Հայաստանի՞ թշուառ հայ ժողովուրդը մինչև այդ ազատութեան գիծը գտնելը՝ կարող է սովից բոլորովին ջնջվել, —«Անկախ Մամուլի» հոգը չէ ամենևին. նա մի բեցեղ ունի այդ թշուառ ժողովրդի համար.—թողէք նրան իր ճակատագրին. թողէք մեռնի սովից. ձեր ինչ գործն է։*

*Եւ այդ օտարոտի, անգութ միտքը արտայայտողները դեռ յաւակնութիւն ունեն հրատարակել իրանց հայ աշխատաւոր, հայ գիւղացիական ժողովրդի բարեկամներ։ Այդ «անկեղծ» բարեկամները սաստիկ զայրանում են նոյն իսկ, երբ տեսնում են, որ հայ գիւղացին կարող է տնայնագործական արտադրութիւններով մի քիչ բարւոքել իր կեանքը կամ ձեռք բերել ապրուստի միջոց, այն ևս իր սեփական տնային մթերքով, տարվայ այնպիսի ժամանակին, երբ նա ուրիշ որևէ աշխատութիւն չունի։*

*«Մի խուրջինն ու երկու կապերտը, չորս արեւին ու մի շալը նրան բարեկեցիկ չեն շինի»—պաֆսով գոռում են «անկախականները»։*

*Բայց դուք, անկախներ, ինչ էք առաջարկում,—ունէ՞ք մի նոր բան, քան այն, ինչ որ ամենքին յայտնի է և ամենքը ասում են։ Ո՞վ չը գիտէ, որ գիւղացուն պէտք է հող և միայն հողը կարող է արմատականապէս ազատվել նրա դրութիւնը, լուծել սոցիալական պրօբլիմներից մէկը։ Մի՞թէ նորութիւն էք ասում։ Դուք այն ասացէք, մինչև այդ ցանկալի օրը հասնելը, մինչև այդ մեծ հարցի լուծումն ինչ պէտք է անել, ինչպէս գիւղացին պէտք է բարեկարգէ իր դրութիւնը։ Ամեն բան բացասելով դուք ոչ մի օգնութիւն ցոյց տուած չէք լինի աշխատաւոր գիւղացուն։ Գուցէ դուք*

նախամեծար էք համարում, որ մինչ՝ հող և ազատութիւն ստանալը հայ գիւղացին սովամահ լինի, բայց այն ժամանակ էլ ձեզ համար կը լինեն այդ հողը և ազատութիւնը...

Դուք իրական օգնութիւն ցոյց տուած կը լինէիք աշխատաւոր գիւղացուն, եթէ աշխատէիք գտնել ճիշտ տեղեկութիւններ հաղորդել նրա միջավայրի իրականութեան մասին։ Ձեր անճիշտ տեղեկութիւններով, գիտութեամբ թէ անգիտութեամբ, դուք վնասում էք նրան և նուազեցնում նրա թշուառութեան աստիճանները։ Ձեր թերթում զետեղած մթերքների տեղեկատուն դուք նոյնիսկ ցանկութիւն չունէք ստուգելու, և այն ժամանակ, երբ Ղափանի շրջանում ցորենի գինը 2 ր. 70 կ. է (պուդը), ալիւրը՝ 3 ր., դուք ցոյց էք տալիս 2 ր. 25 կ. և ալիւրը՝ 2 ր. 40 կ.։ Երբ Գօրիսում ալիւրի պուդը արժէ 3 ր., մի պուդը, ցորենը՝ 2 ր. 70 կ., դուք ցոյց էք տալիս 2 ր. 30 կ., չը նայելով որ դա հակասում է ձեր իսկ տուած տեղեկութիւններին (տես «Անկախ Մամուլ» № 2)։

## ՄԻ ԲՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Իմ ռուսերէն ձեռնարկի մասին)

—

Թ. Ղզմալեանը շատ պարզ կերպով ձևակերպում է իր արծարծած խնդիրները, ուստի և նրա քննադատութիւնը արժանի է ամենայն ուշադրութեան։

Ես իբրև հիմնական սկզբունք եմ դաւանել այն միտքը, թէ «հայ մանուկը ռուսերէն լեզուի այնպիսի դասագիրք պէտք է ունենայ, որ կազմված լինի հայկական աշխարհահայեցողի համեմատ, և որ ուրեմն երբէք չէ կարող գործածվել վրացու կամ թուրքի ուսումնարանում»։

Իմ ընդդիմախօսը այդ միտքը գտնում է շատ ճիշտ և աւելացնում է, թէ յիրաւի մենք չունենք այդ ոգով կազմած ռուսերէնի ձեռնարկ, և թէ Ուշինսկու, Գրիգորովի, Կօրխանիդու, Վօլկերի դասագրքերը խորթ են մեր մանուկների սրտին ու մտքին, որովհետև այդ դասագրքերի նիւթերը մատչելի և սիրելի են ռուս երեխաների համար, բայց ոչ երբէք օտարներին։

Երանի՜ այս խօսքերը խոր տպաւորվեն մեր մանկավարժական աշխարհում, ուր որ արժէքները դեռ լաւ չեն կշռվում և գնահատվում։

Ինձ այդպէս հաւանութիւն տալուց յետոյ, իմ ընդդիմախօսը պնդում է և այն, թէ իմ դասագրքի կազմութիւնը չէ համապատասխանում իմ դաւանած սկզբունքին։ Անշուշտ այստեղ մի թիւրիմացութիւն պիտի լինի։ Եւ ի՞նչ էք կարծում, ինչի՞ց է առաջանում մեր անհամաձայնութիւնը. միայն մի բառ լաւ չը մտածելուց։ Ես ասել եմ՝ «հայկական աշխարհահայեցք», իսկ Ղզմալեանը այնպէս է հասկանում, իբրև թէ այդ պէտք է նշանակէ «հայկական կեանք»։ Եւ որովհետև իմ գրքի մէջ հայկական կեանքի նկարագրութիւններ չը կան, նա համարում է, որ ես հակառակում եմ իմ սկզբունքին։ (Ը մոռանալ, որ նա քննադատում է դեռ «Хрестоматія»-իս ա. գրքոյկը։)

Մթթէ «աշխարհահայեացք» և «կեանք» միևնոյն գաղափարներ են։ Ահա երկիրք, աբեզակ, ասող... հայկական աշխարհահայեացք է, բայց ոչ հայկ. կեանք։ Անդէրսէնի, Պուշկինի, Ժուկօվսկու հեքիաթները (եթէ գեղարուեստական լեզուով է թարգմանած) հայկական աշխարհահայեացք է, բայց ոչ հ. կեանք։ Ես գիտեմ, որ մի Լեվիցկի, մի Գօրխանիդի, նրանց հետ և Ղզմալեանը հայկական կեանք կանուանեն փափախ, արխալուխի, հարիսի, քիւֆթայի նկարագրութիւնը, կամ նաև այսպիսի պրօզայական տեղեկութիւնը՝ «Крикоръ и Аршакъ, сидя у тондира, кушаютъ хлѣбъ съ сыромъ», որ չեն էլ ամաչի թարգմանել հետևեալ կերպով՝ «Գրիգորն ու Արշակը... հաց են ուտում պանիրով», մերկացնելով բառացի թարգմանութեան մշտական գայթակղութիւնը։ Մի մոռանաք «հացը պանիրով», կարծես թէ մի գործիքով՝ գալով, ամանով, ձեռքով...

Այսքանը սկզբունքի թիւրիմացութեան մասին. բայց հարկ եմ համարում փոքր ինչ պաշտպանել իմ նիւթերի ընտրութիւնը։ Ինչու՞ Պուշկինի հեքիաթները հայ մանուկին առաջարկում եմ (վայ մեր օրին, որ այսպիսի տարրական բացատրութիւններ տալու հարկադրված ենք)։ Պուշկինի հեքիաթները ընթերցարանիս մէջ զետեղել եմ նախ այն պարզ պատճառով, որ նրանք բոլորովին մատչելի են հայ մանուկին։ Բայց պ. Ղզմալեանին այս պատասխանը չէ գոհացնում. նա ուզում է իմանալ, թէ ի՞նչպէս կարելի է հայկական աշխարհահայեացք համարել Պուշկինը, Լերմօնտովը, Կրիլովը, Ակսակովը։

Այո՛, այս բանը անըմբռնելի է, եթէ բանին նայենք վեր ի վերոյ, նիւթական կերպով։ Բիբլիան, ս. Գիրքը հրէից և յունաց գրականութեան արտադրութիւն է. բայց մթթէ այն արդէն տասնհինգ դար շարունակ հայ աշխարհահայեացքի խոշոր մասը չէ կազմում։ Գերմանացիք Շիլլերի և Գէօթէյի հետ միասին իրանց մտաւոր կուլտուրայի անբաժան մասն են համարում նաև Հոմերոսն ու Շեքսպիրը։ Ուրեմն այն օրվանից, երբ որ Այվազեան եպիսկոպոսը, Աղայեանը, Թումանեանը ռուսաց ստեղծագործութիւնները գեղեցիկ կերպով հայացրին, նրանք այդ գործով հարստացրին հայկական աշխարհահայեցողութիւնը։ Եւ երբ որ թուրքերն ու վրացիները միևնոյն երկիրը իրանց լեզուով ճոխացնեն, անշուշտ նրանք էլ հնարաւորութիւն կունենան իրանց դպրոցներում այդ նիւթերը գործ դնել, ինչպէս որ այժմ Մանդինեանը գործածելի է համարում նոյնը հայ դպրոցի համար։

*

Իմ դասագիրքը կազմելիս աչքի առաջ ունեցել եմ այն վնասակար անպատեհութիւնը, որ մեր դասատուները՝ մանաւանդ վարժուհիները՝ անգիտակցաբար սովորութիւն են ստանում ռուսերէնը հայերէն թարգմանել բառացի կերպով (хлѣбъ съ сыромъ—հաց պանիրով), ուստի ձգտել են փոխանակ բառացի թարգմանութեան՝ մրցքի, իմաստի հարազատութեան նպաստել, որ մեր մանուկների զարգացման համար անհուն բարիք պիտի լինի։ Այդ վախճանով գրքիս մէջ ռուսերէն յօդուածների ընտիր հայերէն թարգմանութիւնները զուգընթացաբար զետեղել եմ, որով ոչ միայն ռուս՝ այլ և հայ լեզուի կանոնաւոր դասաւանդութիւնը ապահովված եմ համարել։ Ես այդ խրատը Ժան-Ժակ Ռուսօյից եմ ստացել, բայց պ. Ղզմալեանը պնդում է, որ «թարգմանութիւնը—լինի նա բառացի կամ իմաստի —միշտ էլ վնասակար է»։ Պէտք է չը մոռանալ, որ պարոնը իմաստի թարգմանութիւնը վնասակար է համարում։ Նրա դատողութիւնը շատ պարզ է. մայրենի լեզուի օգնութեան չը պէտք է դիմել, այլ օտար լեզուն պէտք է սովորել միանգամայն անկախ ու ինքնուրոյն։

Մինչև որ պարոնը մեզ հանգամանօրեն չը պարզէ, թէ այն ո՛ր հրաբխով կարելի է օտար լեզուն անկախ և ինքնուրոյն սովորել, առանց մայրենի լեզուի օգնութեան,—մենք կասենք, որ նա բառեր է շպրտում, ամենևին չը հասկացնելով մեզ թէ ի՞նչպէս անհնարինը հնարաւոր համարենք։ Նա մեզ ասում է, թէ ուզում էք որ տեսնէք, փակեցէք միշտ մի աչքը, քօռացէք մէկ աչքով... Եւ երբ որ նա այս քարոզն է կարդում, յետոյ իսկոյն աւելացնում է. «մայրենի լեզուն պէտք է հիմք ծառայէ օտար լեզուներ սովորելիս, որովհետև մի նոր լեզու սկսողի համար՝ գործը որոշ չափով հեշտանում է, երբ նա տիրապետում է մայրենի լեզուին»։ Այս նշանակում է. դուք մի աչքը քօռացրու, բայց ուրախ եղիր, որ Աստուած քեզ երկու աչք է պարգևել... Սրանից աւել հեռու գնալ կարելի չէ բառեր շպրտելու արուեստում։

Ապա պ. Ղզմալեանը գոհութիւն է յայտնում, որ ես Մարգոյի դասագրքի դէմ եմ, բայց իսկոյն իմ դասագիրքն էլ Մարգոյի շարքն է դասում։ Իմ դասագրքի մասին վճիռ դնելու ամենայն ազատութիւն ունէք, բայց աններելի է իրողութիւնները ըստ քմաց խեղաթիւրել։ Մարգոն ֆրանսէօլօգիա ունի, ես՝ ոչ. բայց փոխարէնը ես տալիս եմ ամբողջացած բնագիր։ Նա ամեն մի ֆրազի դէմ ոչ թէ թարգմանութիւն է տալիս, այլ հարցական է նշանակում, թէ թողաշակերտը թարգմանէ։ Նրա ֆրազներն էլ ձևացած են ջոկ-ջոկ և մայրենի և օտար լեզուով, մասաւորապէս այսպէս.

Хлѣбъ съ сыромъ—?

Հաց ու պանիր—?

Եւ այնուհետև ուսուցիչն ու աշակերտը հարցը լուծում են այսպէս՝ վայնչարի.

Хлѣбъ съ сыромъ—հացը պանրով.

Հաց ու պանիր—хлѣбъ и сыръ.

Իսկ ես տալիս եմ երկու բնագիր, երկու textus, իբրաքանչիւրը իր հարազատութեամբ.

Кушаютъ хлѣбъ съ сыромъ—ուտում են հաց ու պանիր։

Այսպէս վարվելով, ես մեր ուսուցիչներին և վարժուհիներին այն օգնութիւնն եմ տալիս, թէ նրանք չը լինի թէ մի լեզուով մտածելիս՝ գերի դառնան միւս լեզուի. կամ չը լինի՞ թէ նրանց անշնորհքութեամբ «хлѣбъ съ сыромъ» գարձուածքը՝ դառնայ «хлѣбъ и сыръ», կամ «հաց ու պանիրը» դառնայ՝ «հացը պանրով»։ Միով բանիւ, եթէ մեր ուսումնարաններում իշխում է этимологія, лексика, слово, фраза, ես մոցնում եմ синтаксисъ, рѣчь, словесность, текстъ. Ես ի՞նչ մեղաւոր եմ, որ դուք չէք ուզում ուսումնասիրել իմ բացատրութիւնները լի ու լի։ Իմ մեթոդը երկու textus մեթոդ է, և ոչ թէ պարզ թարգմանութեան մեթոդ։

*

Ես պահանջում եմ, որ օտար լեզուի դասերի ժամանակ այդ լեզուն իշխէ (և ոչ մայրենին), բայց աւելացնում եմ, որ «ոչ մի դաս չը պէտք է սկսվի, մինչև որ հայերէն լեզուով հարկաւոր նախապատրաստութիւնը չը հոգացվի»։ Պ. Ղզմալեանը այդտեղ «հակասութիւն» է գտնում և պահանջում է, որ այդ պարզաբանեմ։

Ահա պարզաբանութիւնը. այլ է բան դասը, և այլ է դասի նախապատրաստութիւնը. մէկի մէջ պէտք է իշխէ օտար լեզուն, միւսի մէջ՝ մայրենին։ Այս «հակասութեան» մէջ դարձեալ նոյն տեղծուածն է թաղված. արդեօք ո՞րն է լաւը,—երկու աչքից մէկը քօռացնե՞նք, թէ՞ ըստ պատշաճի երկուսն էլ բանեցնենք։

Արդէն մեր մէջ էլ մանկավարժական այրուրին է դարձել այն առածը, թէ ամենայն դաս պէտք է ունենայ իր անալիզը, ուրեմն իր նախապատրաստութիւնը, որ, ի հարկէ, պ. Ղզմալեանին էլ անյայտ չը պէտք է լինի, հետևապէս մենք այդ մասին էլ չենք խօսի։ Բայց պարոնը ի՞նչպէս չէ նկատում այն խոշոր բանը, որ մենք organica կեանքով կապել ենք osur եւ մայրենի լեզուի դասերը իրար հետ, այսինքն առողջ մանկավարժութեան այն էական պահանջը, որ բոլոր ուսանելիքները որչափ կարելի է իրար հետ սերտ կապերով միանան և միահամուռ. զօրութեամբ ազդեն մանկան կանոնաւոր զարգացման վրա։ Մթթէ ժամանակ չէ, որ մեր մէջ էլ փոքր ինչ մանկավարժական գիտութիւնը խօսէ, և ոչ թէ իւրաքանչիւրը իր նեղ հօրիզոնի սահմաններում մնայ և դուրսը բան չը տեսնէ։

(Կը շարունակվի)

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

(Քաղուածքներ արտասահմանեան հայ թերթերից)

—

✦ Խառն ժողովոյ մէջ երկար խորհրդակցութեան առարկայ եղեր է Գէորգ եպիս. Երէցեանի Կարնոյ առաջնորդական ընտրութենէն առած հրաժարականը և այդ առթիւ իր մէջ բերած պատճառաբանութիւնները։ Ժողովականք Գէորգ սրբազանի առարկութեանց արդարացի ըլլալը խոստովանելով հանդերձ՝ ստիպեր են, որպէսզի ընդունի նոյն պաշտօնը, յայտարարելով թէ Կարնոյ առաջնորդութեան և իր առաքելութիւններուն միջև անտնութիւն մը չկար. բայց Գէորգ սրբազան պնդեր է, թէ խնդիրները տարբեր են թէև, սակայն կը միանան իր անձին վրայ։ Ժողովը ուզելով վերջին կամքը լսել, հարցուցեր է, թէ ուրիշ կը հրաժարի՞ Կարնոյ առաջնորդութենէն։ Գէորգ սրբազան պնդեց, թէ «դնալ չի հրաժարիր Կարնոյ առաջնորդութենէն», միայն կը փափաքի, որ իր դիրքը ճշտուի հանդէպ Երուսաղէմի։ Ժողովը, նկատելով որ անկարելի պիտի ըլլայ զինք համոզել և Կարնոյ առաջն. կարևոր վիճակին անհովիւ թողուլ, ստիպուեր է նոր ընտրութիւն կատարելու հրահանգը տալ և միևնոյն ատեն պէտք եղած հրահանգները տուեր է Երուսաղէմ երթալիք պատուիրակաց, որպէսզի ջանան կարելին ի գործ դնել բառնալու համար այն «թիւրիմացութիւնները», որոնք տեղի տուած են Գէորգ սրբազանի և միաբանութեան միջև անհամաձայնութեան։

✦ Կիլիկիոյ կաթողիկոսին և Պօլսոյ պատրիարքարանին միջև եկեղեցական իրաւասութեան և քաղաքական կամ ազգային յարաբերութեանց մասին անհամաձայնութիւններ ծագած են։ Տ. Սահակ կաթողիկոս կարգ մը առաջարկներ ու պահանջներ ներկայացուցած է պաշտօնագրով մը։ Պատրիարքարանը հարկադրուած է խնդիրը լուրջ կերպով նկատողութեան առնել, որպէսզի հանգուցեալ Բէյլիքճիեան Մկրտիչ կաթողիկոսի օրով տեղի ունեցած անհաճոյ և ազգաքանդ դէպքերը չկրկնուին։

✦ Վարդօն սպանուած.— Ռուսչուկէն ստացուած հեռագիրներ կը հաստատեն, թէ «Շարժումի» խմբագիր և դաշնակցական նախկին գործիչ Վարդօն սպանուած է Ռուսչուկի մէջ, Համամ-Էօնիւի կողմը, իբրեւ ուսու ժամը 7½-ին։ Վեցհարուածանի երկու գնդակներ անոր գլուխին ու կոնակէն ծակած անցած են. մահը բողէական եղած է։ Դէպքի միջոցին Վարդօյին քովէն անցնող հրեայ մը ըսած է, թէ գնդակ արձակողը գործաւորի կապոյտ գգեստ հագած երիտասարդ մըն էր, որ խոյս տուած է մթութիւնէն օգտուելով։ Հարցաքննութեան ենթարկուած են Թոսրովեան, Սեւլաքոսեան և ուրիշներ։ Ինչպէս կերևայ, սէրօրիսաը ազատ է։ Զոհին կինը և երկու փոքրիկները որը կը մնան։ Կըսուի, թէ Վարդօն իր ընտանիքը Եւրոպա փոխադրելու նպատակով Ռուսչուկ գացած էր։ Վարդօն կովկասահայ էր և իր բուն անունն է Յակոբ Վարդ-Պատրիկով. երկար ատեն տարած է Իսաք Արվախի կեղծ անունով։

## ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

✦ «Berliner Tag.» լրագրին հաղորդում են Թէհրանից, որ Պարսկաստանի մայրաքաղաքում յուզումներ ծագելու պատճառներից մէկը Թիւրք-պարսկական սահմանագլխից ստացված աննպաստ լուրերն են։ Ժողովուրդը դժգոհ է այն բանից, որ շահը բաւականաչափ եռանդ չէ ցոյց տալիս Պարսկաստանի շահերը Թիւրքիայի ոտնձգութիւնների դէմ պաշտպանելիս, որը՝ ինչպէս յայտնի է, օգտվելով Պարսկաստանի ներքին խառնակ դրութիւնից՝ ընդարձակում է իր տիրապետութեան սահմանները ի հաշիւ իր ասիական հարևանի։ Ժողովրդական անբաւականութիւնը արտայայտվեց մի շարք ցոյցերով շահի դէմ, որը այդ պատճառով վճռեց վերջնական փորձ անել։ Հիմք կայ կարծելու, որ պարսկական պալատի հետ սերտ կապեր ունեցող եւրոպական պատուիրակներից մէկի կողմակիցները խրախուսում էին շահի տրամադրութիւնը մեխամրութեան և մէջլիսի դէմ կոնֆլիկտ ստեղծելու համար։ Մինիստր նախագահը և մէջլիսի նախագահի երկու եղբայրները, որոնցից մէկը ներքին գործերի մինիստր է, իսկ միւսը՝ Շիրազի նահանգապետ, կալանաւորվեցին, իսկ մէջլիսի շինութիւնը ամբողջապէս զօրքերով։ Շահը պահանջում է, որ իր հայեցողութեան միայն վերապահվի մինիստրը նշանակելու իրաւունքը, առանց պարլամենտի համաձայնութիւնը հարցնելու։ Մէջլիսը, ի հարկէ, այդ բանին չէ համաձայնվում։

✦ Թէհրանում պաշարողական դրութիւն է յայտարարված։ Օտարերկրեայ դեսպանները ամրացրին իրանց դիրքերը և զինեցին իրանց պահակներին՝ փողոցային անկարգութիւններ առաջանալու դէպքում պաշտպանվելու համար։ Գերմանական դեսպանութիւնը խոստացել է վանդի դէպքում պատսպարել իր մօտ մէջլիսի նախագահին, որը առաջ Բերլինի դեսպանն էր։ Բրիտանական դեսպանութիւնը իր կողմից յայտնել է, որ պատրաստ է իր հովանաւորութեան ներքոյ առնել պարլամենտի միւս անդամներին։ Կեանքի սովորական ընթացքը կանգ է առել։ Շուկան փակված է. փողոցով անցուդարձ են անում հեծելազնդի ու կօզակների պահակախմբերը։

✦ Պարսկական դեսպանութեան անդամներից մէկը, որի հետ դեկտեմբերի 6-ին խօսակցութիւն է ունեցել «Б. В.» լրագրի թղթակիցը, ասել է հետևեալը. «Մեր երկրում արդարև յուզումներ ու զանազան անցքեր են տեղի ունենում, որոնց հետևանքների մասին դատել կարելի է միայն այն եռանդի, հաստատակամութեան և լրված տրամադրութեան վրա հիմնվելով, որոնցով կողմերը պաշտպանում են իրանց դաւանանքները կեանքի մէջ։ Հեռագիրները խօսում են մէջլիսի արձակման հնարաւորութեան մասին։ Այդ մասին մենք տեղեկութիւն չունենք, բայց ես կարող եմ վճռականապէս հերքել այդ բանը, որովհետև մեր սահմանադրական օրէնքների հիման վրա այդպիսի մի քայլ անել ներկայ մօմենտում անկարելի է, իսկ երբ օրէնքով անկարելի է, ապա ուրեմն Պարսկաստանում այդ բանը չէ կարող տեղի ունենալ։ Հաւանական է բէակցիոն մինիստրութիւն նշանակելու լուրը, բայց այդ հանգամանքը ոչ մի առանձին էական փոփոխութիւն չի առաջացնի, որովհետև այդ տեսակ մինիստրութիւնը կընկնի հէնց առաջին քայլափոխում, եթէ մէջլիսը անվստահութիւն յայտնելու լինի։ Ընդունելով Պարսկաստանում այս կամ այն կաբինետի դրութեան խախուտ լինելը և չափազանց խոշոր փոփոխութիւնների հնարաւորութիւնը, ես այնուամենայնիւ կարծում եմ, որ օրինականութիւնը երկրի մէջ չի խախտվի»։ Բոլորովին այլ հայացք է յայտնում թիւրքական դեսպանութեան անդամներից մէկը, ասելով որ Պարսկաստանը գտնվում է սուր յեղափոխութեան շրջանում, որը հետզհետէ աւելի է սաստկանում, և նախագուշակել, թէ ինչով կը վերջանայ դա, ներկայումս անհնարին է։

✦ Արտասահմանեան լրագիրներում տպագրված են հետևեալ մանրամասնութիւնները Թէհրանում կատարված արիւնահեղ դէպքերի մասին։

Շահը գտնվում է երկու զօրեղ հոսանքների միջև։ Պաշտպանողականները ներկայացնում են շահին գաւառից ստացված հեռագիրները, որոնք պէտք է համոզեն, որ ժողովուրդը համակրում է շահի ձգտումներին։ Այդ հեռագիրներում իրանց հաւատարմութիւնն են յայտնում։

«Եթէ շահը ցանկանում է կռիւ մղել,—ասված է նրանցից մէկում,—մենք պատրաստ ենք հետևել նրան»։

Այդ երկու բանակները, «Barl. Tagebl.» լրագրի Թէհրանի թղթակցի կարծիքով, միատեսակ տպաւորութիւն չեն թողնում։

Մէջլիսի կուսակիցները բաղկացած են գլխաւորապէս ինտելիգենտ խաւերից, մինչդեռ նրանց հակառակորդները՝ կասկածելի տարրերից։

Ընդհարման դէպքում՝ հարցը կը լուծեն կօզակները, որ զօրքի միակ փոքր ի շատէ կազմակերպված մասն են կազմում, բայց նրանց վրա, վերոյիշեալ թղթակցի ասելով, վստահանալ անկարելի է։

Միևնոյն լրագրին, դեկտ. 6-ից (ն. տ.), ուղղված հեռագրում ասված է հետևեալը. «Մենք այս գիշեր անցկացրինք, առանց իմանալու թէ ինչպիսի վտանգի ենք ենթարկված։ Հէնց այս րոպէիս իմացայ, որ շահը գիշերը հրաման է արձակել կօզակների բրիգադային ռմբակոծել մէջլիսի շինութիւնը և գրոհ տալ նրա պաշտպանների վրա։ Դրա հետևանքը կը լինէր սարսափելի կոտորած։ Բայց վերջին բոպէին կօզակների հրամանատարը խորհուրդ է տուել շահին հրաժարվել այդ մտքից, պատճառաբանելով որ իր զինուորների վրա չէ կարող վստահ լինել։ Այն ժամանակ շահը զինվորներ արեց. նա առաջարկեց իր կողմակիցներին մաքրել հրապարակը, եթէ մէջլիսն էլ նոյնը անելու լինի։

Որովհետև կողմերից և ոչ մէկը չէ վստահանում միւսին, թէև հեռացան, այնուամենայնիւ չը ցրվեցին, այլ թաղնվեցին։

Ահագին վտանգ են ներկայացնում հասարակութեան տականքները, որոնց գրգռում է պահպանողական կուսակցութիւնը և որոնք սպասում են խառնակութեան, անիշխանութեան, որպէսզի զբաղվեն թալանները և սպանութիւններով։

✦ Անգլիական լրագիրներում մենք գտնում ենք մի քանի տեղեկութիւններ անցուդարձերի մասին, որոնք այնքան նշանաւոր դեր էին խաղում Պարսկաստանի ներկայ դէպքերում։ Անցումանը մի անուն է, որ տրվում է զանազան ընկերութիւններին, որոնք տարբեր նպատակներ ունեն, բայց որոնք վերջերս զբաղված էին գլխաւորապէս քաղաքականութեամբ։ Դրանցից ամենանշանաւորն է «Իթթիհարի Թալաբա»-ն (այսինքն իմաստութիւն որոնողների դաշնակցութիւն), որը 5—6 հազար անդամներ ունի։ Ապա կան և մի շարք ուրիշ ընկերութիւններ—օրինակ «անջումէններ Դօնշիմէնդան», այսինքն գիտնականների դաշնակցութիւն, և այլն։ Այդ բոլոր ընկերակցութիւնները աւել կամ պակաս չափով պաշտպան են դիմադրական կամ ազատաբար շարժման։ Պալատական շրջանները փորձում էին ստեղծել հայրենասիրական կազմակերպութիւն «անջուման խիդմաթ» անունով՝ որպէս հակակշիռ դիմադրական և յեղափոխական ընկերութիւնների։ Սակայն ստեղծել «իսկական պարսիկ ժարդանց» կազմակերպութիւն, ըստ երևոյթին, չաջողվեց։ Շահի դէմ դժգոհութիւնն աւելի ևս սաստկացաւ ժողովրդի մէջ՝ վերջերս անգլօ-ռուսական դաշնագիրը կապվելու պատճառով, որի հիման վրա, ինչպէս յայտնի է, ազդեցութիւնների շրջանը Պարսկաստանում բաժանվում է Ռուսաստանի և Անգլիայի միջև։ Պարիզի «Temps» լրագիրը, օրինակ, բերում է քաղուածքներ պարսկական ժողովրդական ներկայացուցիչների ճառերից, որոնց մէջ չափազանց դժգոհութիւն է յայտնվում այդ դաշնագիրը կապելու առթիւ։ «Մենք անկախ ենք,—ասում էին մէջլիսի անդամները,—այն ինչ մի քանի նահանգներում միայն ռուսները իրաւունք կունենան խճուղիներ կամ երկաթուղիներ կառուցանել և բանկեր բանալ, իսկ միւս նահանգներում այդ իրաւունքը տրվում է միայն անգլիացիներին։ Մենք այդպիսով այլ ևս տէր չենք մեր սեփական տան մէջ, և դռները փակվում են բոլորի առաջ, ով ռուս կամ անգլիացի չէ։ Եթէ այդ հարցում շահագրգռված պետութիւնները այդ դրութիւնը յարմար են համարում, մենք չենք կարող շատ և շատ վատ չը համարել այդ»։ Եւ նորեկս, նոյն «Temps» լրագրի խօսքով, պարսկական մի լրագիր գրում էր. «Լաւ է՞ մեզ մնռնել մեր սեփական արիւնի մէջ լողալով, քան լաւ ապրել ռուս կամ անգլիական հովանաւորութեան տակ»։ («Р. В.»)

✦ Մէջլիսի նախագահն ասաց «Berliner Tag.» լրագրի աշխատակցին, թէ նա հաւատացած է, որ ժողովրդական ներկայացուցչութեան պաշտպանները կը յաղթեն բէակցիայի կողմակիցներին։

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

*Թէհրան, 10 Նոյեմբերի*

Այսօր 1-ին Նոր-Ջուղայից տեղիս գործակալ քահանայի անունով խփված հեռագիրը գուժեց վեհափառ կաթողիկոս Մկրտիչ I-ի անսպասելի մահը։

Հայրիկի ժամվան բօթն առնելուց յետոյ, զբաղմունքի առարկայ է դառնում հոգեհանգստի խնդիրը։ Գործի գլուխ է անցնում այն մասնաժողովը, որը միսսիա ունի պարսկական սահմանադրութիւնից իրաւահաւասարութեան պատառներ ճանկել հպատակ պարսկահայերի համար։ Ըստ այդ մասնաժողովի որոշման և կարգադրութեան՝ հոգեհանգիստը և նրա հետ միասին սգահանդէսը պէտք է կատարվեր կաթողիկոսի թաղման օրը, և այն՝ միայն հայերի համար և հայերի շրջանում։

Սակայն մասնաժողովի այդ որոշումից դժգոհ են մնում կուսակցութիւնները, որոնք հոգեհանգստին աւելի միջազգային բնոյթ տալու կողմն են լինում։ Երկու կուսակցութիւնների երեքական ներկայացուցիչները ի մի գալով՝ կազմում են մի խորհրդակցութիւն, ուր վճռում են հոգեհանգստին միջազգային գոյն տալը դրական իմաստով։ Մասնաժողովը—կամայ ակամայ—հետևում է նրանց։ Պէտք է ասել, որ այդ հանգամանքին ոչ պակաս նպաստում է նաև ռուսաց արտակարգ դեսպան և լիազօր մինիստր Ն. Գ. Հարտվիգի պատրաստակամութիւնը՝ օգնելու հոգեհանգստին միջազգայնութիւն տալու գործին։

Գործակալ քահանան ցրում է հայերէն և ֆրանսերէն լեզուներով տպագրած մահագոյժ յայտարարութիւններ, որոնցով Հայրիկի յիշատակը յարգողներին հրաւիրում է եկեղեցի և ապա Հասանաբադ թաղի դպրոցը՝ ներկայ լինելու հոգեհանգստի արարողութեան ու սգահանդէսին։ Ֆրանսերէն յայտարարութիւնները իր դուլատի ձեռքով բաժանում է ռուսաց դեսպանատունը։

Ժամը 11-ի մօտերքը երկաթ խուռն բազմութիւնը լցնում է Հասանաբադի դպրոցի բակը։ Սգահանդէսը կառավարող մասնաժողովը ամբողջ բակը ծածկել էր տուել գորգերով և խփել էր տուել երկու հսկայ վրաններ։ Նաև ոչ հայերի համար շարել էր տուել աթոռներ։

Դպրոցի դէպի բակը նայող դուռն ու լուսամուտները պատած էին սև կտորով։ Դրան ճակատին կախված էր յոգնավաստակ Հայրիկի մեծադիր կենդանագիրը, որի կողքին սև կտորի վրա սպիտակ տառերով կարդացվում էր. «Հայոց Հայրիկի անմահ յիշատակին» խօսքերը։ Դպրոցի դարպասի գլխին ծածանվում էին երեք սև դրօշակներ։

Բակի մէջտեղում պատրաստված էր սեղանը, որի շուրջը շարված էին մօտ 30-ի չափ պաշտներ, հետևեալ հաստատուն

թիւններից և խմբերից.—Հայոց դպրոցների հոգաբարձութիւնից, կանանց բարեգործական ընկերութիւնից, հայ վաճառականներից, հայ դերձակների ընկերութիւնից, հայ ըմպելավաճառներից, հեռագրատան և պօստատան հայ պաշտօնեաներից, ռուսաց բանկի հայ պաշտօնեաների, իմպերիալ բանկի հայ պաշտօնեաներից, բանւոր դերձակների խմբից, «Քնար» թերթի խմբագրութիւնից, հայոց դպրոցների աշակերտութիւնից, ամերիկական դպրոցի հայ սաներից, կաթոլիկական դպրոցի հայ աշակերտներից, հնչակեան և դաշնակցական կուսակցութիւնների զանազան խմբակներից և այլն։

Ժամը ուղիղ 11-ին եկան ռուսաց դեսպանը դեսպանատան գրեթէ բոլոր բարձրաստիճան պաշտօնեաներով, ֆրանսիացոց, ամերիկացոց և հոլանդացոց դեսպանները, բելգիացոց փոխ-դեսպանը, կօզակների բրիգադի պաշտօնեաները՝ պոլկօվնիկը իր պօդ-եսաուլով և կապիտաններով, քաղաքապետը, ամերիկացի միսիոնարները և կաթոլիկ վարդապետները։

Եկան նաև յայտնի և անուանի մուշտէիդներ՝ աղա սէիդ Արդուլլան, սէիդ Մահմէդը, սէիդ Զէյնալը, Նէիմա-ուլ-Իսլամը և այլք։ Կային պարսկական ժամուլի, մէջլիսի և բազմաթիւ անջումանների ներկայացուցիչները։ Իրանց ներկայացուցիչներն ունէին նաև հրէաներն ու գեբրերը։

Ներկայացուցիչներ էին ուղարկել արքայազունք Նայիբ-էս-Սալթանէն և Շաէս-Սալթանէն։

Ներկայացուցիչներից մի երկու հոգի բեբին ծաղկեայ փնջեր։

Նախքան սգահանդէսը, կատարվեց հոգեհանգիստ։ Իրանց գրած ներբողները կարդացին պ. պ. Ց. Միրզայեանը—հայերէն, միրզա Մատթէոս խան Մելիքեանը—պարսկերէն և Հաջեանը—ֆրանսերէն։

Հայերից յետոյ հերթը հասաւ պարսիկներին։ Ամբիոն բարձրացաւ «Սուր-Իսրաֆիլ» թերթի խմբագիրը և կարդաց իր շարահիւսած ներբողը։ Ապա ոտքի ելաւ սէյիդ Զէյնալը, Պարսկաստանի ներկայ օրերի հոգեւորը, և հայերի օգնութեամբ (կարդում էր) ամբիոնին մօտենալով՝ սկիզբ դրեց իր ընդարձակ և անվերջ ճառախօսութեան։ Սէյիդ Զէյնալը, օգտվելով հանգամանքից, միանգամայն շեղվեց օրվայ պատշաճ նիւթից և իր ճառախօսութեան համար յենման կէտ ընդունելով մոլեռանդ պահպանողականների դաւանած հայրենասիրութիւնը՝ գնաց դէպի անհուն հեռուները... Օր. նա, ներկայութեամբ դեսպանների, շեշտեց, որ Պարսկաստանի ազգաբնակութիւնը բաղկացնող տարրերը՝ հայերը, գեաբրերը, հրէաները, և այլն, հայրն, անխախտ և անդրդուելի մնալով հանդերձ իրանց դաւանանքի և կրօնի վրա՝ պարտաւոր են սիրել Պարսկաստանը՝ իբրև իրանց հայրենիքը և պարտաւոր են պարսիկների հետ միասին զէնքը ձեռքին գիմաւորել Իրանի թշնամիներին, եթէ սրբանք Պարսկաստանի վրա երբ և իցէ արշաւելու համարձակ քայլեր անեն։ Իսկ եթէ նրանք հանգիստ կը մնան, շարունակեց նա, ու մեզ չեն նեղացնի, այն ժամանակ մենք էլ կը յարգենք ու կը պատուենք նրանց։ Սէյիդ Զէյնալը նոյնիսկ յորդոր կարդաց, որ, ի սէր հայրենասիրութեան, հայերն ևս պարսիկների նման խոյս տան եւրոպական ձևով հագնվելուց և եւրոպական ձևով շարժվելուց։ Վերջը, իբրև ամփոփումն, ասաց, որ ինքը շատ է կարդացել ու լսել հայոց Հայրիկի մասին և գիտէ, որ նա մեծ և անկեղծ հայրենասէր է եղել, որի օրինակին պարտաւոր են հետևել բոլոր հայերը։

Սէյիդ Զէյնալի այս խիստ պահպանողական և խիստ տենդենցիոզ ճառը, ըստ երևոյթին, լաւ տպաւորութիւն չը թողեց պետութեանց ներկայացուցիչների վրա։

Հայրիկի յիշատակը յարգելու եկած զանազան պետութեանց, հաստատութեանց և խմբակցութեանց ներկայացուցիչներին հայ հասարակութեան կողմից շնորհակալութիւնները յայտնեց իշխան Ֆէրամ-բէյ Դաղեանը։ Ժամը 12-ն անց էր, որ սգահանդէսը վերջացաւ, և խուռն ամբոխը սկսեց ցրվել։

Այդ օրը, ի յարգանս Հայրիկի յիշատակի, փակ էին բոլոր հայ վաճառականների խանութները և արձակված էին հայոց, ամերիկացոց և կաթոլիկների դպրոցների հայ աշակերտները։

Ս. Մուրադեան

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ (ՇՏՈՒՏԳԱՐՏՈՒՄ)

III

Ինչ միջոց է հարկաւոր սոց.-դեմ. ենթասեկցիայի ներկայացուցչի դրական համաձայնութիւնը ստանալու համար։ Այն սոցիալ-դեմօկրատիան, որի կենտրոնական կոմիտէտը մերժել էր հրէական սիօնիստ սոցիալիստների դիմումը (սոցիալ-դեմօկրատական դրօշակի տակ Շտուտգարտի կօնգրեսին ներկայանալու համար) և քողոքել (առաջ, նախքան կօնգրեսը) սիօնիստ սոցիալիստների, Դաշնակցութեան և tutti quanti նացիօնալիստ կազմակերպութիւնների մուտքի դէմ,—ինչ ասել կուզի, որ այդ սոցիալ-դեմօկրատիայի բիւրօյական ներկայացուցիչը (ընկեր Պլեխանովը) քաջ ծանօթ լինելով Դաշնակցութեան կաշուին, պիտի տար առանց այլևայլութեան իր բացասական-ժխտական քուէն։

Սակայն տեսէք թէ ինչ խաղեր են խաղացվել կուլիսների ետևում։

Այդ ժամանակ Պլեխանովի հիւանդութեան պատճառով փոխարինում են նրան ժամանակաւորապէս Մարտովը և տիկին Բալաբանովը։ Դիմում են այս՝ իրանց դերին ինկօմպետենտ, անտեղեակ ներկայացուցիչներին (ս.-դ.-ական ենթասեկցիայի) և հաւատացնում, որ Դաշնակցութիւնը ունեցել է արդէն փաստապէս իր կօնգրեսային ներկայացուցչութիւնը դեռ Ամստերդամի միջազգային սոց. կօնգրեսում 1904 թ., այնպէս որ այս անգամ ս.-դ.-ական ենթասեկցիան կարիք ունի սոսկ իր ֆորմալ (ձեական) համաձայնութիւնը, իբրաւական սանկցիան տալու։ Սոց.-դեմ. ներկայացուցիչները հաւատալով՝ տալիս են իրանց համաձայնութիւնը առանց տատանվելու։ Եւ իրաւ, եթէ Դաշնակցութիւնը արդէն փաստապէս ընդունված է եղել դեռ երեք տարի առաջ և պահանջվում է ս.-դ.-ական ենթասեկցիայի սոսկ ձեական համաձայնութիւնը, ինչ գործնական արժէք կարող էր ունենալ այդ դէպքում նրա ժխտողական-մերժողական պատասխանը։

Սակայն էականն այն է՝ արդեօք, խսկապէս ներկայացուցչութիւն ունեցել է Դաշնակցութիւնը Ամստերդամի կօնգրեսում 1904 թ.։

Ո՛չ, հազար անգամ ոչ։

Եւ ս.-դ. ենթասեկցիայի ներկայացուցիչները իրանց միամտութեամբ զոհ են դարձել մի կեղծիքի, մի մոլորեցուցիչ խարդախութեան։

Մենք ապշում ենք ոտից գլուխ, երբ այս ամբողջ պատմութիւնը հաղորդվում է մեզ բուն աղբիւրից Շտուտգարտում։

Երևակայեցէք, 1904 թ. Ամստերդամում ունեցել է ներկայացուցչութիւն միայն Հընչակեան կուսակցութիւնը Պլեխանովի միջոցով*) և ոչ մի դէպքում Դաշնակցութիւնը։ Որպէսզի կարողանան ս.-դ.-ական ենթասեկցիայի համաձայնութիւնը՝ Դաշնակցութեան ընդունելութեան հարցում՝ որոնալ, ահա նրանք Հնչակեան կուսակցութեան մասնակցութեան փասը վերագրում են Դաշնակցութեան. ահա թէ ինչից են խոսվում ս.-դ.-ական ենթասեկցիայի ներկայացուցիչները՝ Մարտով և Բալաբանով, և տալիս իրանց համաձայնութեան քուէն։

Ռուս ընկերներն էլ ապշում են իրանց հերթին, երբ Շտուտգարտում զգոյշանալ ցոյց ենք տալիս նրանց, որ Ամստերդամի կօնգրեսում մասնակցող հայ-յեղափոխական կուսակցութիւնը ոչ թէ Դաշնակցութիւնն է եղել, այլ Հնչակեան կուսակցութիւնը։ Անսահման էր Մարտովի զգացած ցաւը, որովհետև մարդը տեսաւ պարզապէս, որ զոհ է գնացել թիւրիմացութեան։ Նա, տարբերներ շարունակ ժընեվ ապաստանած լաւագոյն սոց.-դեմ. ժուրնալիստներից մէկը, շատ լաւ էր ճանաչում Դաշնակցութեան ֆիզիօնօմիան, որպէսզի առանց այլևայլութեան իր դրական քուէն տար յօգուտ հայկական նացիօնալիզմի տիպիկ ներկայացուցչին՝ ոտք դնելու համար պրօլետարական ինտերնացիօնալի շեմքը։

Բացատրութիւններից պարզվեց, ուրեմն, Դաշնակցութիւնը լոյալ ճանապարհով չէ վաստակել կօնգրեսային ներկայացուցչութիւնը ս.-դ.-ական ենթասեկցիայի դրօշակի տակ. պարզվեց, որ նրա մուտքը՝ Շտուտգարտի համագումարում՝ կեղծիքի և թիւրիմացութեան արդիւնք է եղել. պարզվեցին նաև «Խարիսխ»-«Արօրի» տենդենցիոզ, չեղած ու չը կատարված յայտարարութիւնները և նրանց «հուրրա-Դաշնակցութիւնը» սնամէջ յօդուածների միտուքները։

(Կը շարունակվի)

## ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԲԱՒԱՐԻԱ

Գերմանական ծովային լիգան, որ այնքան խոշոր դեր էր խաղում նաւատորմը աւելացնելու մասին Վիլհելմ կայսրի արտայայտած հայեացքները տարածելու գործում, ներկայումս արդէն քայքայվելու վրա է։ Լիգի նախագահ բաւարական պրինց Ռուպրեխտը, դժգոհ լինելով լիգի անդամների մեծամասնութեան պրուսասիրութիւնից, որոնք աշխատում են համագերմանական գործից ստեղծել ինչ-որ առանձնայատուկ մի բան, դուրս է եկել լիգից, նրան հետևել են և միւս բոլոր բաւարացիները։ Բաւարական պրինց-ռեգենտ Լիւդվիգը ըստ երևոյթին համակարծիք է որդու տեսակէտի հետ։ Հէնց որ Միւնխենում յայտնի եղաւ պրինցի որոշումը հեռանալ նախագահութեան պաշտօնից, ռեգենտը, իբրև բաւարական զօրքերի գլխաւոր հրամանատար, հրամայեց սպաներին ևս հեռանալ լիգի անդամների թւից, որովհետև լիգան ինչ-որ քաղաքական նպատակների է հետևում։

Այդ ամբողջ ինցիդենտը չափազանց զբաղեցնում է գերմանական մամուլին։ Ինչքան էլ որ պաշտօնական շրջանները աշխատում են այդ գործը թաղցնել, այնուամենայնիւ կասկածից դուրս է, որ Բաւարիան մի անգամ ևս ուզեց ցոյց տալ, որ ինքը Պրուսսիայի դաշնակիցն է միայն, այլ ոչ վասալը։

Տասը տարի սրանից առաջ Մօսկվայում, թագադրութեան հանդիսի ժամանակ, պրուսական արքայորդի Հենրիխի և բաւարական գահաժառանգ Լիւդվիգի միջև խոշոր ընդհարում տեղի ունեցաւ գերմանական թագաւորութիւնների մէջ Բաւարիայի ունեցած դերի մասին՝ արտայայտած կարծիքների տարաձայնութիւնների հողի վրա։ Արքայորդի Հենրիխի կարծիքով Բաւարիան վասալ պետութիւն է, իսկ գահաժառանգ Լիւդվիգը հանդիսաւոր ճաշի ժամանակ ընդծել է, որ Բաւարիան դաշնակից է միայն։ Այն ժամանակ այդ տարաձայնութիւնը մեծ ուշադրութիւն գրաւեց և պատճառ եղաւ Վիլհելմ կայսրի անձնական միջամտութեան։

Այժմ Բաւարիան նորից վճռեց նկատել տալ, որ Բերլինի հայեացքները ամենևին չեն համապատասխանում Միւնխենի կարծիքին։ («Н. В.»)

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Ե. Կ. ԽՕՐՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԴՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿՆՈՐԻՇԵՎ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵԲԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Հրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՒՂԳ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ
ՉՄԵՌԱՑԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)
ԹԻՖԼԻՍԻՑ
ԲԱԴՈՒ (Գանձակ, Եւլախ)
Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։
ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվո, Ռիօն)
Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվո—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվո—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվո—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։
ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրոպոլ)
Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրոպոլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրոպոլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։
ԲԱԹՈՒՄԻՑ (Պետերբուրգի ժամանակով)
Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։
ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։
ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ. — առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։
ԶՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։
ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. — 7 ժամին։ Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

Լոյս են տեսել
Առանձին թերթիկներով ընտիր թղթի վրա տպագրված
«ԱՅՍՕՐ ՏՕՆ Է ԾՆՆԴԵԱՆ ԱՒԵՏԻՍ»
(Երգ ծննդեան Տեառն մերոյ Յիս. Քրիստոսի)
Գինն է 5 կ.
ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷԷ
Գինն է 10 կ.
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“. 3—5

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ
Երկուշաբթի, դեկտեմբերի 17-ին,
Հայ դերասանական խումբը
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Ի պատիւ Յ. ԱԲԵԼԵԱՆԻ 25-ամեայ բեմական գործունէութեան
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
I
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ
Դրամա Իբսէնի (III գործ.)
II
ԱՐՅՈՒՆՔԻ ՀՕՎԻՏԸ
Դրամա Ահարոնեանի (I գոր.)
III
ԿՐԻԶԻՆՍԿՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ
Կօմ. Սուբօվօ Կօբիլինի (II գործ.)
Երկրորդ և երրորդ գործողութիւնների միջնաբերին կը կայանայ յօբելեանական հանդէսը։
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին
Տոմսակները կարելի է ստանալ կասայում։
(շ. կ.) 1—2

Կիրակի, դեկտեմբերի 16-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԴԱՆԻ ԴՐՀԼԻՃՈՒՄ
կայանալու է
Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան օգտին
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
„ԿԱՊՈՅՏ ՄԻՐԱԺ“
ԾՐԱԳԻՐ
Վիճակախաղ արժէքաւոր իրեղէններով. պետական գանձարանի 1 տոմս 50 ր. արժողութեամբ իր կուպօններով, սերվիզ, հեշտաեռ նիկելից, վազեր և այլն. սինեմատօգրաֆ՝ տիկ. Իվանիցկու ղեկավարութեամբ. յաւերժահարսը այրում, պտտվող սեղան՝ հետաքրքիր սիւրպրիզներով, տանգին կօտիլիօն։
Մանրամասնութիւնները կը լինեն աֆիշաներում։
Հետաքրքրաշարժ դիմակը հասարակութեան որոշմամբ կը ստանայ ՊՐԻԶ (ընծայ)։
Բոլոր ներկայ եղողներին խնդրում են ունենալ իրանց վրա մի որևիցէ նկատելի իր բաց-կապոյտ գոյնի (զգեստ, դօմինօ, դիմակ, բանդ, ծաղիկ, ժապաւէն, փողպատ և այլն), հակառակ դէպքում 50 կ. տուգանքի կենթարկվին։
Երաժշտութ. եւրօպական և ասիական
Սկիզբն է ժամը 9-ին երեկոյեան
Մուտքի տոմսակների գինն է 2 ր. 10 կ.։ Ուսուցիչների, վարժուհիների և ուսանողների համար—1 բուբլի։ Տոմսակները ծախվում են Ընկերութեան գրասենեակում, Абасъ-Абадская № 7. Նոյն գրասենեակում շնորհակալութեամբ ընդունվում են նուիրատուութիւններ վիճակախաղի համար։
(շ. կ.) 1—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
(Զեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար)
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
Գինն է 1 ր. 50 կ.
Միքայէլեան փողոց № 138
8—20

ԲԺՇԿՈՒՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(Ա. Հ. շ. կ.) 39—50

ԲԺԻՇԿ
Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն 10—12 առաւօտ. 6—7 երեկ.
Բոտիշչեվսկի փող. № 22.
(ամ. օ.) 10—3

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ասթմոսի եւ ադիֆեռի հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առաւօտեան 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 62—100

ԲԺԻՇԿ
Ա. Միսիրարեանց
Ընդունում է հիւանդներին. մանագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 66—160

Վաճառվում են Ե. ԹՈՓՋԵԱՆԻ խմբագրած
ԼՈՅՍ
1908 թ. պատկերազարդ, գունատիպ օրացոյցները
I Գրպանի օրացոյցը 308 երես, 12 պատկերներով և 15 առանձին բաժիններից բաղկացած ընդարձակ յաւելուածով. գինը 20 կոպէկ։
II Պատի օրացոյցը բացի սովորական յաւելուածից—(բոլորովին նոր բովանդակութեամբ)—ունի մի առանձին արի գրքոյկ—«Ժողովածու գրական և գիտական»։ Տախտակը 8 գոյնով տպած՝ գեղացիութեան և բանւորութեան էմբլեմները հայ կնոջ հետ միասին. իսկ երեսը Գեորգ Զաւուշի պատկերը. գինը 40 կոպ.։
Գումարով գնողներին ձեռնտու զեղչ։
Դիմել՝ Թիֆլիս գլխաւոր պահեստը՝ «Գուտենբերգ» գրավաճառանոցը։
(Կ. Չ. ու.) 9—10

Գր. Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ
«Բուսական աշխարհից»
Նպաստ հայ գիւղատնտեսութեան
ՆԵՐԿԱՏՈՒ ԲՈՅՍԵՐ
Ե Ի
Դրանց ներկերը—հին հայկական եղանակով պատրաստելու ձեւը։
Գինն է 25 կոպ.
Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում։
(ու.) 5—10

ԳՐԱՄՕ ԵՒ ԸՆԿ. զեղագործ.ների։—Ռուսաստանում թոյլատրված։
ՄԱՏԻԿՕԻ ՍՐՍԿՈՒՄ
Զգուշացէք կեղծումներից
Երկարամեայ և բազմաքանակ աջողութիւնները ապահովում են, որ նա կարուկ կերպով գործում է պերելոյի (հօնօրէյ) ժամանակ կարճ ժամանակամիջոցում ՄԱՏԻԿՕՆ բժշկում է ամենայարատև արտահոսութիւնը։
ՊԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ
(15 և 30) 14—2

ՄԱՐՄԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՆԴԵԼՕ ԱՆԴՐԷՕԼԵՏՏԻ
ԹԻՖԼԻՍ,
Միքայէլեան պրօսպ., 79
Վաճառքի կայ զանազան տիպերի պատրաստի արձանների առագին պաշար չափազներով, ինչպէս և ընդունվում են պատուէրներ մարմարեայ և մօզաիկ աշխատանքների
(Հ. Հ.) 5—10

*) Այդ այն ժամանակն էր, երբ քանակցութիւն էր տեղի ունենում Հնչակեան կենտրօնի և Ռ. Ս.-Դ. բ. դ. կենտր. կոմիտեի միջև Հնչակեան կուսակցութիւնը սոց.-դեմօկրատական վերածելու համար և Պլեխանովը մի տնտակ քաղաքականութեամբ ստանձնել էր նրանց ներկայացուցչութիւնը. դա մի պատահական դէպք էր ի հարկէ։

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мутдусіаковъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 8.